

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ք 539 Ք



ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԿԱՆՈՆԱԳԵՐՔ
ՀԽՈՀ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ
ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

— 1 —

1 9 3 1

3

ԽՍՀՄ Պրեսսարմեր բալը յերկրմերի, միացե՞ւ ՀԽՍՀ

03 MAR 2019

Շ Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Ե Մ
Հ Ա Ս Մ ի ի ց ի ա յ ի Գ լ ս ա վ ո ր
Վ ա ր շ ս ո ւ յ ա մ պ ե տ
Ա. Դ մ ի գ ն ը ր ո վ,
1931 թ. ս ե պ տ. Զ.
Յ ե ր հ ա ն

ԺԱՄՈՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ


Հ. Խ. Ա. Հ.

ԹԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՄԻԼԻՑԻԱՑԻ ՆԵՐՔԻՆ
ԾԱՌԱՑՈՒԹՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ԲԴ ՄԻԼԻՑԻԱՑԻ
ԳԵԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ВРЕМЕННЫЙ УСТАВ ВНУТРЕННЕЙ
СЛУЖБЫ РАБОЧЕ-КРЕСТЬЯНСКОЙ
МИЛИЦИИ ССРА



1-396691

ԳԵՂԱՔԻ ՏՎԱՐԱՆ

Գլուխիս 6900 (բ), Գատվեր 5014, Տեղամ 3000

ԺԱՄԱՆԱԿԱԿ ՈՐ ԿՈՆՈՆԱ-
ԳԻՐՔ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱ-
ՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ
ՆԵՐՔԻՆ ԾՈՌԱՅՈՒԹՅԱՆ

Հատված I

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Բանվորա-գյուղացիական միլիցիան հանդիսանում է Խորհրդային իշխանության վարչական-գործադիր մարմինը :

Բանվորա-գյուղացիական Միլիցիայի հիմնական խնդիրն ե՝ պահպանել հեղափոխական կարգը և հանրային անվտանգությունը, վորոնք անհրաժեշտ են սոցիալատական շինարարության համար :

2. ԲԳ Միլիցիայի շարքերում հաշվառ անձերը հանդիսանում են միլիցիայի պաշտանատար անձեր :

3. Մառայությունը կրելու ասպարիդում ԲԳ Միլիցիայի աշխատակիցները ղեկավարվում են՝ ներկա կանոնադրություն, ԲԳ Միլիցիայի կանոնադրությամբ, պատշաճ ու բնադրությամբ, ի զարգացումն այդ կանո-

նագրքի ու կանոնադրության և Հայաստանի ԽՍՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության պետի հրատարակած հրամաններով ու կարգադրություններով։

4. ԲԳ Միլիցիայում ծառայությունը կը բերլու կարգը վորոշում և ԲԳ Միլիցիայի աշխատակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, նույնպես և ներքին կարդ ու կանոնը ԲԳ Միլիցիայի հիմնարկություններում և զորամասերում։

5. Դպրոցական հաստատություններում ծառայությունը կը բերլու կարգը նախատեսվում և հատուկ կանոնադրությամբ, վոր հրատարակվում և Հայաստանի ԽՍՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության կողմից։

6. Ծառայության այն վանցանքների համար, վորոնք քրեական հետապնդման յենթակա չեն, ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-շարժային և վարչական-անտեսական կազմի աշխատակիցների վերաբերմամբ կիրառվում են կարգադրահական պատիժներ այն կարգով, վորը սահմանված և ԲԳ Միլիցիայի կարգադրահական կանոնադրքով։

7. ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-շարժային և վարչական-անտեսական կազմի անձնավորությունների կողմից կատարած այն հանցանքները, վորոնք ուղղված են ԲԳ Միլիցիայի

յօւմ ծառայությունը կրելու համար սահմանված կարգի վեմ, ճանաչվում են վարդեկան պինդորական հանցանքներ։

8. ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-շարժային և վարչական-անտեսական կազմի անձերը զինվորական հանցանքների գործերով ընդդատյա յեն Ռազմական արիբունակին, իսկ մյուս հանցանքների գործերով՝ ընդհանուր դատարաններին։

9. Ներկա կանոնադիրքը տարածվում է այն աշխատակիցների վրա, վորոնք պատկանում են ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-շարժային և վարչական-անտեսական կազմին։

10. ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-շարժային կազմի աշխատակիցներ են համարվում նրանք, ովքեր անմիջապես պատային ծառայություն են տանում, և եղափոխական կարգըն ու հանրային անվտանգությունը պահպանելու աշխատանքն են կատարում և Միլիցիայի աշխատակիցների քաղաքական դաստիարակության աշխատանքն են տանում։ նույնպես և նրանք, ովքեր ղեկավարում են այդ աշխատանքը։

11. ԲԳ Միլիցիայի վարչական-անտեսական կազմի աշխատակիցներ են համարվում նրանք, ովքեր ԲԳ Միլիցիայի մարմինների վարչական, բժշկա-սանիտարական և տըն-

տեսական սպասարկման աշխատանքն են կատարում . նույնպես և նրանք, ովքեր ԲԴ Միլիցիայի գպրոցական հաստատությունների դաստիարակությունների կազմին են պատկանում :

12. ԲԴ Միլիցիայի ոպերատիվ-չարային և վարչական-տնտեսական կազմի աշխատակիցները, իրենց գրաված պաշտոնների համաձայն բաժանվում են՝ բարձր, ավագ, միջն և կրտսեր պետկազմի աշխատակիցներ և շարքային կազմի աշխատակիցներ :

13. ԲԴ Միլիցիայի անձնական կազմի խմբերի և կառեգորիաների վրա բաշխումը սահմանվում է Հայաստանի կեն ԲԴ Միլիցիայի Գլխավոր վարչության պետի կողմից :

14. ԲԴ Միլիցիայի ոպերատիվ-չարային և վարչական-տնտեսական կազմի աշխատակիցները ծառայության մտնելիս գրավոր պարտավորություն են տալիս ծառայել վոչպակաս քան 2 տարի :

Յերկու տարուց ավելի ժամանակով ծառայության մեջ մնալ ցանկացողները նորից նույնպիսի գրավոր պարտավորություն են տալիս :

15. Միլիցիայի գպրոցական հաստատություններն ավարտած անձերը պարտավոր են ծառայել այդ մարմիններում յուրաքան-

չյուր սովորած մեկ ամսի վորխարեն յերկու ամիս, բայց վոչ պակաս քան 2 տարի, ընդունություն գպրոցական հաստատության մեջ անցկացրած ժամանակը պարտադիր ծառայության ժամկետի մեջ չի հաշվվում :

16. Մինչև ժամկետը լրանալը ծառայությունը թողնելու համար ԲԴ Միլիցիայի ոպերատիվ-չարային և վարչական-տնտեսական կազմի աշխատակիցները սրատափակունավություն են կրում զինվորական հռնցանքների մասին կանոնադրությում :

17. ԲԴ Միլիցիայի աշխատակիցներին թույլ է տրվում ծառայել ԲԴ Միլիցիայի միենույն մարմնի մեջ բարեկամների կամ մոտիկ ազգականների հետ (ծընդողներ, վորդիներ, ամուսիններ, յեղացրներ, քույրեր) այն գեղագում, յեթե նրանց միատեղ ծառայությունը կապված չե անմիջական սոսորագրելիության հետ կամ յեթե մեկը մյուսի վրա հսկողություն չունի :

18. ԲԴ Միլիցիայի ոպերատիվ-չարային և վարչական-տնտեսական կազմի աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների վրա տարածվում են այն բոլոր արտոնությունները, վորոնք որենքով նախատեսված են Բանվորական յուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և

Նրանց ընտանիքների անդամների համար—
ժողովրդական կրթության, հողոգտագործ—
ման, գյուղատնտեսության, տուրքերի և
բնակարանների վերաբերյալ արտօնությունների առաջարկում։

19. ԲԳ Միլիցիայի սպերատիվ-չարային
և վարչական-տնտեսական կազմի աշխատա-
կիցները պարտավոր են ծառայության ժա-
մանակ կրել սահմանված տարազով (Փոր-
ձա) հանդերձանք՝ համապատասխան տար-
բերության նշաններով և նրանց հատկաց-
ված պաշտոնի համեմատ դեմք, վորոնք մա-
տակարարվում են ճրիաբար, տախտակների
(տարեների) համաձայն և պարտավոր են
կրել այն կանոններով, վորոնք հաստատ-
ված են ՀՍԽՀ ժողկոմիսորհին կից ԲԳ Մի-
լիցիայի Գլխավոր վարչության պետի կող-
մից։

20. Հաղնելու սահմանված ժամկետն
անցնելուց հետո, հանդերձանքը դառնում է
աշխատողի սեփականությունը. սպառողի-
նումն ու զինասարքը ԲԳ Միլիցիայի շարքե-
րից հեռանալուց հետո յենթակա յեն վերա-
դարձնելու։

2. ԾԱՌԱՑՈՒԹՅԱՆ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Այն անձինք, վորոնք ԲԳ Միլիցիայի
մարմինները ծառայության են մտնում,
պետք է բավարարեն հետեւյալ պայմաննե-
րին։

ա) սահմանադրությամբ (կոնստիտու-
ցիայով) ողետք ե ողալիքն ընտրական իրա-
վունքներից։

բ) տարիքը 21-ից պակաս չպիտի լինի։

գ) մինել գրադեմ։

դ) առողջության դրությամբ պետք է հա-
մապատասխանի այն սլահանջներին, վոր
օահմանում ե ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի գլխա-
վոր վարչությունը։ Առժողկոմատի հետ
միատեղ։

ե) քննություն բռնել, թե վորքան նա
պետքական և ծառայության համար։

Վորոնք բացառություն, Միլիցիայի մար-
միններում ծառայության նշանակող պետը
կարող է ծառայության ընդունել նաև 21
տարին չըրացրած անձերին, միայն 18 տա-
րեկանից վոչ պակաս։

22. ԲԳ Միլիցիայի մարմիններում ծա-
ռայության ընդունելությունը կատարում է
ԲԳ Միլիցիայի համապատասխան վարչու-
թյան պետը՝ սահմանված ծրագրով քննու-

թյուն կատարելուց հետո : Քննություն կատարելու համար , անհրաժեշտ դեպքում , կաղմվում եւ հանձնաժողով (կոմիսիա) :

23. ԲԳ Միլիցիայի մարմիններում ծառայության չեն կարող ընդունվել նրանք , վորոնց համար այդ մարմիններում ծառայելու արգելված եւ :

24. ԲԳ Միլիցիայի մարմիններում ազգային կազմում են աշխատավոր մասսաների խավերից հավաքագրվողները :

25. ԲԳ Միլիցիայի մարմիններում ծառայելու համար դիմում տվող անձինք , բոլոր սպայմաններին բավարարելուց հետո , և սահմանված քննությունը բոնելուց հետո , պաշտոնի յեն կարգվում մի ամիս փորձվելու ժամկետով . փորձաշրջանն անցնելուց հետո , Միլիցիայի համապատասխան վարչության պետը վճռում են նրան վերջնականապես հաստատելու խնդիրը :

26. Շարքային կաղմում պաշտոնի մտնող անձինք փորձման ժամկետն (փորձաշրջանն) անց են կացնում համապատասխան կուրսերում՝ սահմանված ծրագրով :

27. Միլիցիական գործի ուսումնասիրության հասուկ կուրսերն ավարտած կարմիր բանակայինները , այն կուրսերը , վորոնք կաղմակերպվում են ԲԳԿԲ գորական մա-

սերին կից , այդ կուրսերն ավարտելուց հետո մի տարվա ընթացքում ԲԳ Միլիցիայի մարմիններում ծառայության են ընդունվում առանց փորձաշրջանն անցկացնելու , և առանց ԲԳ Միլիցիայի նախապատրաստական կուրսերի ուսուցումն անցնելու , բացի թժչկական քննությունից :

28. ԲԳ Միլիցիայի մարմիններում ծառայել ցանկացողների բժշկական քննությունը կատարվում եւ ՀԱԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության հրատարակած հատուկ կանոնադրության հիման վրա և այդ կանոնադրության կորդով :

3. ՆՇԱՆԱԿԵԼՈՒ , ՊԱՇՏՈՆՆ ԻԶԵՑՆԵԼՈՒ
ՅԵՎ ՊԱՇՏՈՆԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՄԱԳԵՍ
ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

29. ԲԳ միլիցիայի մարմիններում նշանակումը կատարվում է նկատի ունենալով վրակը (կվալիֆիկացիոն) ,— այնպիսի պաշտոնների , վորոնք նախատեսված են հաստիքներով , համապատասխան պետերի կողմից , վորոնց վերապահված և այդ իրավունքը :

30. ԲԳ Միլիցիայի աշխատակիցների ծառայության մեջ առաջ քաշելու , համապատասխան կատեգորիաների հաշվառման ,

Հաշվառումից հանելու կարգը վորոշվում է հաստուկ հրահանդույ (ինստրուկցիայով), վոր հրատարակում և ՀՍԽՀ Միլիցիայի Դլամակոր վարչությունը:

31. ԲԳ Միլիցիայի մարմիններում պաշտոնների նշանակումը կատարվում է հետեւյալ ձևով.

ա) ԲԳ Միլիցիայի ռայոնական և քաղաքային վարչությունների պետերին նշանակում է ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության պետը. ընդվորում տեղական գործադիր կոմիտեներն ու քաղաքային խորհուրդները ունեն բացարկի (օտար) իրավունք.

բ) Ոպերատիվ-շարային և վարչական-տնտեսական կազմի մնացած անձերը նշանակվում են ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության պետի վորոշած կարգով:

32. Պաշտոնի նշանակելու մասին հայտարարվում է ԲԳ Միլիցիայի Համապատասխան վարչության հրամանում:

33. Ինչպես ազատ տեղերի, նույնական ուրիշ անձերի կողմից գրաված, բայց հեգանդության, արձակուրդ դնալու, գործուղման և ժամանակավորապես պաշտոնից հեռանալու պատճառով թափուր մնացած պաշտոնների ժամանակավոր կատարումը

գրիվում և աեղականների կամ ոգնականների վրա (յեթե այդպիսիները հաստիքով կան) կամ դրվում և պաշտոնով մոտիկ անձերի վրա, այդ մասին հայտարարելով հրամանում:

Ժամանակավոր պաշտոն կատարողները պահում են իրենց հաստիքային պաշտոնները:

34. Ժամանակավոր պաշտոններ կատարող ԲԳ Միլիցիայի աշխատակիցներն ուղարկում են ծառայության բոլոր իրավունքներով և կրում են իրենց պաշտոնների համաձայն բոլոր պատասխանառությունները:

35. Ժամանակավոր պաշտոն կատարող ԲԳ Միլիցիայի աշխատակիցները, յեթե ժամանակավոր պաշտոնի աշխատավարձը ավելի բարձր է, քան իր հաստիքային պաշտոնի աշխատավարձն է, և յեթե նույնականում է շարքային կամ կրոտիկ պետկատիքին իրավունք ունի բարձր աշխատավարձն ուսանալ այն դեպքում, յեթե պաշտոնի ժամանակավոր կատարումը տեսլի է վոչ սղակու բանվորական որ:

36. Պաշտոնի ժամանակավոր կատարմանն անցնելու թույլտվությունը կատար-

վում և տվյալ պաշտոնին նշանակելու իրավունք ունեցող անձերի կողմից :

37. Յաջը պաշտոնի իջեցնել թույլ և տըրվում միայն մի կատեգորիայով և այն եւ հետեւյալ դեպքերում .

ա) Այն անձերի նկատմամբ, վորոնց պաշտոնը վերացվում և հաստիքների կրծատման հետեւյանքով, կամ յերբ ԲԳ Միլիցիայի մարմինների վերակազմություն և կատարվում (ուսարգանիզացիա), յեթե այդ անձնավորությունները բոլորովին չեն հեռացվում ծառայությունից .

բ) Այն անձերի նկատմամբ, վորոնք առանձատացիայի կարգով ճանաչված են ամենի ցածր պաշտոնի իջեցնելու .

գ) Կարգապահական կարգով :

38. ԲԳ Միլիցիայի աշխատակիցներին պաշտոնից ժամանակավոր հեռացնում ե՝

ա) Այդ պաշտոնին նշանկող պետը, յերբ աշխատակիցը կատարում է արատավորող կամ շահախանդիր հանցանքներ .

բ) Այդ պաշտոնին նշանակելու իրավունք չունեցող պետը նույն դեպքերում, միայն պետք և անմիջապես այդ մասին գեկուցի այն պետին, վորն իրավունք ունի այդ պաշտոնին նշանակելու, բացատրելով ժամանակավոր հեռացնելու պատճառներ .

դ) Համապատասխան դատականությունների կան մարմինների պահանջով :

39. Պաշտոնից ժամանակավոր հեռացնելու յուրաքանչյուր առանձին գեղաքում, բացի դատականությունների մարմինների պահանջով ժամանակավոր հեռացնելու դեպքերից, այն պետը, վորի կարգադրությամբ ժամանակավոր հեռացվածը նշանակված և յեղել պաշտոնի, անմիջապես կարգադրություն և առում քննություն կատարելու մասին :

ԲԳ Միլիցիայի աշխատակիցներին ժամանակավոր հեռացնելու դեպքում, նրանց գրաված պաշտոնները աղաստ չեն համարվում :

40. Պաշտոնից ժամանակավոր հեռացվածների ողբագործվում են հեռացնող պետերի հայեցողությամբ . ընդվորում գատականքների մարմինների պահանջով ժամանական մարմինները հեռացվածներին ողբագործում են այդ մարմինների հետ համաձայնության գալով :

41. Պաշտոնից ժամանակավոր հեռացված անձերը պահում են իրենց պաշտոնի համաձայն բոլոր տեսակի բավարարումները :

42. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

42. ԲԳ Միլիցիայի բոլոր աշխատակիցները իրավունք ունեն լինելու Պրոֆեսիոնալ միության անդամներ :

43. Աշխատանքի կողեզսի գործողաւթյունները չեն տարածվում ԲԳ Միլիցիայի ուղերատիվ-շարային և վարչական տնտեսական կազմի աշխատակիցների վրա :

44. Մտավոր և գրաւենյակային աշխատանքով զբաղված կանայք աշխատանքից ազատվում են մինչեւ ծննդաբերությունը 42 որ, և ծննդաբերությունից հետո ևս 42 որ, իսկ Փիղիքական աշխատանքով զբաղված կանայք աշխատանքից ազատվում են մինչեւ ծննդաբերությունը 56 որ, և ծննդաբերությունից հետո ևս 56 որ :

45. Հղիության հինգերորդ ամսից հետո կանայք չեն կարող դիշեր ժամանակ աշխատանքի ուղարկվել :

46. Իրենց կաթով յերեխաններին կերակրող կանայք ոգտվում են աշխատանքի ժամանակ ընդմիջումներից յերեխային կերպակրելու համար, այդ ընդմիջումները բանվորական որվա հաջին ել լինում :

47. Բանվորական որը պետերի կազմի անձերի համար նորմավորված չե շարքային կազմի անձերի համար սահմանվում է հետեւյալը՝ Փիղիքական աշխատանքով զբաղվողների համար—որական 8 ժամ . իսկ զրամենյակային աշխատանքով զբաղվողների համար—Յու կես ժամ :

48. Փոխեփոխ աշխատանքի դեպքում և անընդհատ որապահության դեպքում սահմանվում ե բանվորական ժամանակի միատեսակ տեղողություն թե ցերեկը և թե դիշերը :

49. Անհրաժեշտության դեպքում, նորմավորված բանվորական ժամանակով աշխատող աշխատակիցները պետք է կատարեն ուղերատիվ աշխատանք նաև նորմալ բանվորական ժամանակից դուրս, առանց հատուկ վարձատրության :

50. Անհրաժեշտության դեպքում, աշխատակիցները պարտավոր են աշխատել նաև հանդորյակի հանդստի որերին և հեղափոխական որերին. ընդվորում չողուածործած հանդստի և հեղափոխական որերի փոխարեն նրանց վերպահվում են ուրիշ հանդստի որեր :

51. ԲԳ Միլիցիյի աշխատակիցներին թույլ չի տրվում զուգավոր աշխատանք (работа по совместительству), այլև վարձովի աշխատանք: Այս արդիքը չի տարածվում՝

ա) Գրական, մանկավարժական, բժշկական, գիտական, գեղարվեստական և դերասանական աշխատանքի վրա, այսանց վորքան հրանք համատեղելի յեն ծառայության պարտականությունների կատարման հետ:

բ) Այն անձանց աշխատանքի վրա, վորոնք միջին, ավագ և բարձր պետերի կազմին են պատկանում վորոնքս մասնագետների պետական և հասարակական մարմիններում:

Գերութիւնը դուզավար աշխատանքը թույլ ե տրվում միայն յուրաքանչյուր առանձին դեպքում, ԲԳ. Միլիցիայի համապատասխան պետի թույլտվությամբ:

5. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

52. Տեղափոխություն և կոչվում աշխատակցի ԲԳ Միլիցիայի մի հիմնարկությունից մյուսը փոխադրումը:

53. Միլիցիայի համապատասխան վարչությունների պետերը իրավունք ունեն ԲԳ. Միլիցիայի աշխատակիցներին տեղափոխել նրանց կողմից սպասարկվող տերիտորիայի սահմաններում: ԲԳ. Միլիցիայի աշխատակիցներին տեղափոխելու իրավունքը ՀԽՍՀ ամբողջ տերիտորիայում պատկանում է ԲԳ. Միլիցիայի Գլխավոր վարչության պետին:

54. Տեղափոխությունները կատարվում են՝

- Օտարայության ուժուի համար,
- Իրենց աշխատակիցների անձնական խնդրի համաձայն:

55. Տեղափոխվող անձերը պետք են որ ուղարկած առաջնորդը ներկայանան առաջադրության մեջ (предписание) նշանակված ժամկետին:

56. Տեղափոխության ժամանակ, յերբ կապված են բնակավայրը փոխելու հետ, տեղափոխվողին պետք են անհրաժեշտ ժամանակը տրվի իրեն անձնական գործերը կարգավորելու համար՝ պատեհով նրան ծառայության պարտականությունների կատարումից:

57. Տեղափոխությունների ժամանակ, յերբ կապված են բնակավայրը փոխելու հետ, ԲԳ միլիցիայի աշխատակիցներն առանձին են տեղափոխության առթիվ որական ծախսերը, միանվագ նպաստ են բավարարման լրացուցիչ տեսակներ այն չափերով ու կարգով, վորոնք սահմանված են ՀԽՍՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության հապարակած հաստիկ կանոնադրություններով:

6. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

58. Գործուղում է կոչվում ԲԳ Միլիցիայի աշխատակիցի իր մշտական ծառայության վայրից գուրս գոտինվելը, կատարված նրա պարտականությունների կատարման հետ, ինչպես նաև ծառայության կարգով հանձնա-

թարությունների կատարման հետ, այլև
յերբ գնում ե մասնադիտական կրթություն
ուսանալու:

Գործուղումը կարող ե լինել՝ ա) անհա-
տորեն և բ) միավորության կազմում:

59. Գործուղումը կատարվում է ԲԴ Մի-
լիցիայի այն վարչությունների պետերի կար-
գադրությամբ, վորտեղ ծառայում է գոր-
ծուղվողը:

60. Թույլ չի տրվում գործուղել այն աշ-
խատակիցներին, վորոնք դատի կամ քննու-
թյան տակ են, առանց դատական-քննչական
մարմինների թույլտվության, վորոնց մոտ
նրանք հաշվի յեն առնված ըստ գործի:

61. Կանանց հղության հ-րդ ամսից չի
կարելի գործուղել իրենց մշտական աշխատ-
տանքի վայրից գուրս:

62. ԲԴ Միլիցիայի գործուղվող աշխատա-
կիցներին տրվում է գործուղման վկայա-
կան, վորի մեջ ցույց ե տրվում գործուղ-
ման տեղը և տեղուղությունը:

63. ԲԴ Միլիցիայի աշխատակիցների գոր-
ծուղման վճարումները կատարում են այն
չափերով ու կարգով, վորոնք սահմանված են
ՀՍԽՀ ԲԴ Միլիցիայի Գլխավոր վարչության
պետի հրատարակած հաստիկ կանոնադրու-
թյամբ:

64. Գործուղման ճանապարհվելուց առաջ
դործուղվողները, ծառայության կարգով
կամ պետի կարգադրությամբ իրենց փոխո-
րինողներին ևն հանձնում իրենց ուստիակա-
նությունները. նրանց են հանձնում ծառայու-
թյան կարգով իրենց ձեռքի տակ յեղած դը-
րամական գումարները, գույքը, գործերը
և հաշվետվությունը ու զեկուցում են այդ
ժամկետում. այլև զեկուցում են զործուղման
ճանապարհվելու ժամանակի մասին իրենց
անմիջական պետին: Կարճաբար գործուղման
գեղըում թույլ ե տրվում հանձնել միայն
ընթացիկ գործերը:

Միավորության կազմում գործուղվողնե-
րի մասին զեկուցում ե միավորության պե-
տը:

65. ԲԴ Միլիցիայի աշխատակիցները գոր-
ծուղման վայրը հասնելուց հետո ցուցակա-
գրվում են ԲԴ Միլիցիայի տեղական մարմ-
նում: Խոկ այն աշխատակիցները, վորոնք
գործուղվում են ԲԴ Միլիցիայի տեղական
մարմնների կոմ դպրոցական հաստատու-
թյան տրամդրության տակ, պարտավոր են
ներկայանալ այդ մարմինների կամ դպրո-
ցական հաստատությունների պետերին:

66. Գործուղման վայրը գնալիս կամ մշտա-
կան ծառայության վայրը վերտառնալիս

արգելվում ե առանց հատուկ թույլովության շեղվել ուղիղ ճանապարհից կամ կանգ սունել ճանապարհի միջնարկան կետերում։

67. Յեթե գործուղվողը իրենից անկախ պատճառներով ճանապարհին կանդ և առնում, այն ժամանակ նա կանդաման պատճառների և յերկարատևվության մասին տեղեկանք ստանալու համար դիմում և յերկաթուղով կամ ծովով դնալիս յերկաթուղարձի կայաբանի (նավահանդաւուի) պետին կամ ՄՊԲՎ տրանսպորտային բաժնի աշխատակցին, իսկ գետնուղիով դնալիս նա դիմում և ԲԳ Միլիցիայի մարմնին, գործադիր կոմիտեյին կամ խորհրդին։

68. Հիվանդանալու գեղքում կամ յեթե զանազն արդելառիթ պատճառներով գործուղվողը հնարավորություն չի ունենում ժամանակին վերադառնալ իր մշտական ծառայության վայրը կամ գործուղման վայրը հասնել, այն ժամանակ նա պարտավոր և հաստատել այդ պատճառները համապատասխան պետական մարմինների միջոցով և սուցած փաստաթղթերը ներկայացնել իրեն գործուղող պետին։

69. Ռւշացման համար վրապես հարգելի պատճառներ (գործուղման վկայականի մեջ

գույց տված ժամկետից դուրս) կարող են լինել.

ա) հիվանդությունը,

բ) տարերային աղետները,

գ) այլ հանդամանքներ, վորոնք հարգելի կճանաչվեն այն պետի կողմից, վորի կարգադրության տակ և գործուղված պաշտոնատար անձը՝ կամ այն պետի կողմից, վորը նրան գործուղել է։

70. Գործուղման մեջ անցկացրած ժամանակի մասին և գործուղումից վերադառնալու մասին հայտարարվում և այն հիմնարկության հրամանում, վորտեղ ծառայում և գործուղվողը։

7. ԱՐՁԱԿՈՒՐԴԻՆԵՐ

71. ԲԳ Միլիցիայի ոպերատիվ-չարային և վարչական-տնտեսական կազմի բոլոր աշխատակիցները կարող են հետեւյալ տեսակի արձակուրդներն ստանալ.

ա) հերթական,

բ) անհերթ,

գ) հիվանդության պատճառով,

դ) հեռավոր վայրերում ծառայելու համար։

72. Հերթական արձակուրդ և տրվում տա-

րին մեկ անգամ, վոչ պահառ քան 13 բան-
վորական որ.

73. ԲԳ Միլիցիայի աշխատակցին արձա-
կուրդ չսովոր գեղքում, նրան տրվում է
դրամական փոխատուցում՝ նրա աշխատա-
վարձի համեմատ, կամ չոպտադործված ար-
ձակուրդը միացում է հետեւյալ տարվա
հերթական արձակուրդին։ Հերթական ար-
ձակուրդների միացումը յերկու տարվա
արձակուրդներից ավելի թույլ չի տրվում։

74. Անհերթ արձակուրդները տրվում են
հատուկ-հարգելի գեղքերում, ԲԳ Միլիցի-
այի համապատասխան վարչության պետի
հայեցողությամբ, մեկ ամսից վոչ ավելի
ժամանակով։

75. Անհերթ արձակուրդից սպաված ան-
ձինք չեն զրկվում հերթական արձակուրդ
ստանալու իրավունքից։

76. Հիմանդրության պատճառով արձա-
կուրդները տրվում են ընդհանուր-սահման-
ված կարգով։

77. ԲԳ Միլիցիայի դպրոցական հաստա-
տությունների փոփոխիկ կազմի արձա-
կուրդները տրվում են ԲԳ Միլիցիայի դըպ-
րոցական հաստատությունների մասին կո-
նոնադրությունների նախատեսած կարգով։

78. Արձակուրդից սպավող անձերին վե-
րապահվում են պաշտոնի համեմատ բոլոր
տեսակի բավարարման իրավունքը։

79. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները ար-
ձակուրդ ստանալու համար դիմում են ի-
րենց անմիջական ոլետին դրավոր ձեռվ։

80. ԲԳ Միլիցիայի այն աշխատակիցները,
վորոնք զատի և քննության տակ են գըո-
նվում, իրենց մշտական ծառայության վայ-
րից գուրս արձակուրդ կարող են ստանալ
միայն դատական-քննչական մարմինների
համաձայնությամբ, վորոնց մոտ նրանք
հաշվի յեն առնված ըստ գործի։

81. Ծառայության մշտական վայրից
գուրս արձակուրդն ոգտագործելիս, յերկա-
թուղագծով 200 կիլոմետրից ավելի, ջրա-
յին ճահապարհներով 55 կմ, ավելի և գետ-
նուղիներով 10 կմ. ավելի հետափորու-
թյան վրա հիմնական աճրակուրդին պետք է
ավելացնել մի որ—յերկաթուղով գնալիս
յուրաքանչյուր 600 կմ. համար, ջրով գը-
նալիս յուրաքանչյուր 215 կմ. համար և
գետնուղիներով գնալիս յուրաքանչյուր 32
կմ. համար։

82. ԲԳ Միլիցիայի աշխատակիցներին ար-
ձակուրդ տալու իրավունքը պատկանում է

ԲԳ. Միլիցիայի համապատասխան վարչությունների պետքը:

83. Արձակուրդ գնացողները ծառայության կարգով կամ համապատասխան պետի կարգադրությամբ իրենց փոխարինողներին են համաձնում իրենց պարտականությունները և իրենց ձեռքի տակ ծառայության կարգով յեղած դրամական գումարները, դույքը, ժործերն ու հաշվեավությունը:

84. Արձակուրդ գնացողին տրվում է համապատասխան վկայական ցույց սալով ժամկետը:

85. Արձակուրդի ժամկետը լրանալուց հետո, վոր ցույց և տրված արձակուրդի վըկայականի մեջ, ԲԳ Միլիցիայի աշխատակիցները պարտավոր են իրենց ծառայության վայրը գտնել, յեթէ չեն ստացել կարգադրություն սուհմանված կարգով արձակուրդի ժամկետի յերկարացման մասին։

86. Արձակուրդ գնալու և վերադառնալու մասին ԲԳ Միլիցիայի աշխատակիցը զեկութում և վերադառնության կարգով։

87. ԲԳ Միլիցիայի աշխատակիցի արձակուրդ գնալու և վերադառնալու ժամանակի մասին հայտարարվում է այն Հիմնարկության հրամանում, վորտեղ նաև ծառայում է։

88. Իրենից անկախ պատճառներով արձակուրդի ժամկետից ուշանալու դեպքում, արձակուրդ գնացողը պարտավոր է պատճառների մասին վկայական ներկայացնել պետական պատշաճ հիմնարկություններից։

89. Արձակուրդ գնալիս ԲԳ Միլիցիայի աշխատակիցներին ժամանակից առաջ տըրվում է ամբողջ արձակուրդի ժամանակված աշխատավարձը, բայց հիվանդության պատճառով արձակուրդ գնալիս, յերբ համապատասխան նպաստ է տրվում սահմանված կարգով։

8. ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ՅԵՎ
ԾԱՌԱՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՆԱԼԸ

90. Պաշտոնից ազատվում են՝

ա) յերբ ԲԳ Միլիցիայի դպրոցական համապատակություններն են մանում։

բ) ուրիշ պաշտոնի նշանակվելիս։

շ) տեղափոխության դեպքում։

դ) ոժանդակ (ուղերդ) նշանակվելիս։

ե) ԲԳ Միլիցիայի մարմինների ծառայությունից հեռանալու դեպքում։

91. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները ԲԳ Միլիցիայի դպրոցական համապատակությունները մանելիս, պաշտոնից աղատ են

Հաշվիւմ նրանց այդ հասպատությունների
փոփոխիկ կազմի ցուցակների մեջ մացնելու
մոժենութիւ :

92. ԲԳ. Միլիցիայի աշխատակիցներին
ծառայությունից հեռացումը կարող է լի-
նել համապատասխան պետերի կարգադրու-
թյամբ, հետեւյալ դեպքերում .

ա) յերբ ԲԳ. Միլիցիայի մարմիններում
վերակազմություն ե կատարվում (սեարդա-
նիզացիա), նույնպես և յերբ այդ մարմին-
ներում հաստիքների (շտատների) կրծա-
տում ե լինում .

- բ) անհամապատասխան լինելու դեպքում .
- բ) հանցանք կատարելու հետեւանքով .
- դ) աստտեսացիոն կարգով .
- ե) կարգապահական կարգով .
- զ) հիվանդության պատճառով .
- ը) սեփական ցանկությամբ .

93. Սեփական ցանկությամբ հեռանալ
կարելի յէ պարտադիր ծառայությունն անց-
կացնելուց հետո :

94. Պարտադիր ծառայության ժամկետն
անցնելուց հետո, ծառայությունը թողնել
ցանկացող ԲԳ. Միլիցիայի աշխատակիցը
պարտավոր է հայտնել այդ մասին մի ամիս
առաջ մինչև պարտադիր ծառայություն

ժամկետի լրանալը . ընդլարում նրան կա-
րելի յէ պահել ծառայության մեջ մինչև
փոխարինող գտնելը, բայց 15 րից վոչ ա-
վելի : Եերբ ծառայությունից հեռանալ ցանո-
կացող աշխատակիցը չի հայտնում նախորոք
իր ցանկության մասին, նա կարող է պահ-
վել ծառայության մեջ մինչև փոխարինող
գտնելը, վոչ ավելի յերկու ամիս ժամանա-
կով :

95. Կարգապահական կարգով հեռացումը
կատարվում է ԲԳ. Միլիցիայի կարգապահա-
կան կանոնադրքի համեմատ :

96. Ներկա կանոնադրքի 92-րդ հոդվածի
«ա», «բ» և «զ» կետերով (պունկտերով)
հեռանելու դեպքում ԲԳ. Միլիցիայի հիմնար
կությունը պարտավոր է հեռացողին վճա-
րել արձակման նպաստ (выводное пособие)
հատուկ հրահանդով (ինպարուկցիայով)
սահմանված չափերով ու կարգով : Մնացած
բոլոր դեպքերում արձակման նպաստ չի տըր-
փում :

97. ԲԳ. Միլիցիայի աշխատակիցներին ծա-
ռայությունից ատաենսացիոն կամ կար-
գապահական կարգով հեռացնելու դեպքում
չՍնՀ Միլիցիայի պահպատ վարչության
պետին իրավունք և վերապահվում զրկել

Հեռացվածներին ԲԳ Միլիցիայի մարմինները ծառայության մտնելու իրավունքից վորոշ ժամանակով :

98. Ախալ հեռացնելու դեմ կարելի յի գանգատ տալ վերադասության կարգով (ՈՕ կոմանձ) և այդ գանգատը նայելում է կարդապահական կանոնադրքի կարգով :

99. ԲԳ Միլիցիայի աշխատակիցների հեռանալու մասին հայտարարվում է տայն վարչության հրամանում, վորանդ նրանք հառայում ենին :

100. Ծառայությունից հեռացողը պարտավոր է հանձնել իրեն իրավասության տակ յեղած գործերը, գրամմական գումարները, հաշվետվությունը, զույքը, զենքը և ժամկետը չանցկացրած հանդերձանքը :

101. Բացառիկ դեմքում, գրամմական գումարները և զույքը հանձնելու համար, հիմնարկության պետի կարգադրությամբ, թույլ է տրվում պահել հեռացողին, տալով նրան, նրա վերջին պաշտոնի ռոճիկը, այնքան ժամանակ, վորքան փաստորեն անհրաժեշտ է :

9. ԱՍՏԵՍԱՑԻԱ. (ՎԱՅՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՔ

102. Աստեսացիայի (վկայության) նկատակն ե՝ գնահատական տալ աշխատակ-

յի պատրաստականության մասին բարոր տեսակետներից՝ ԲԳ Միլիցիայի մարմիններում աշխատանքը զեկավարելու համար :

103. Աստեսացիան տրվում է աստեսացիայի յենթակա ահճնավորության աշխատանքի գրության, ուրիշ նյութերի (մատերիալների), այլև նրա անմիջական պետի կարծիքի հիման վրա :

104. Աստեսացիան լինում է յերկու տեսակ.

ա) ընթացիկ, վոր տրվում է ամեն տարի վորոշված ժամկետներին .

բ) վարդամ (Ճօրծոնայի), վոր տրվում է անհրաժեշտ զեկավերում ԲԳ Միլիցիայի վարչությունների համապատասխան պետերի հայեցողությամբ :

105. Աստեսացիայի յենթակա յի ԲԳ Միլիցիայի ամբողջ պետկազմը: Շարքային կազմը կարող է աստեսացիայի յենթարկվել իր պետերի ներկայացնելով :

106. Աստեսացիան կոմիսիաների կազմակերպման կարգը, նրանց ձևը, ժամկետները և աստեսացիա տալու կարգը կանոնավորվում են հատուկ հրահանդով, վորը հրամարակում է ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի գլուխոր վարչության պետը:

10. ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄԻ ՈԺԱՆԴԱԿՆԵՐԻ
(ՌԵԶԵՐՎՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

107. ԲԳ. Միլիցիայի պետհրի կազմի ո-
ժանդակ և հիմնվում ՀՅԵՀ ԲԴ Միլիցիայի
Գլխավոր վարչությանը կից՝ և սժանդակի
կազմում յեղած բոլոր պետերը յենթարկ-
վում են ԲԴ Միլիցիայի Գլխավոր Վարչու-
թյան պետին :

108. ԲԳ. Միլիցիայի Գլխավոր Վարչու-
թյանը կից սժանդակում կարող են լինել
այն անձինք, վորոնք նախատեսվում են նը-
շանակվելու պաշտոնների կամ վերջին ժա-
մանակ գրավել են այնպիսի պաշտոններ,
վորոնք ցածր չեն պետերի կազմի ավագ
խմբին պատկանող պաշտոններից :

109. Սժանդակի մեջ գրանցումը կատար-
վում և ԲԳ. Միլիցիայի Գլխավոր Վարչու-
թյան պետի կարգադրությում՝ հայտարա-
բեկով այդ մասին հրամանի մեջ :

110. Սժանդակում գրանցված անձինք
ստանում են բոլոր տեսակի բավարարում-
ները ԲԳ. Միլիցիայի մարմիններում ռւնե-
ցած վերջին պաշտոնի համաձայն :

111. Սժանդակում գրանցվածներին կա-
րելի յի աշխատանքի ներդրավել համապա-
տասխան պետերի կարգադրությամբ :

Համկած II

1. ԲԳ. ՄԻԼԻՑԻԱՅԻ Ա. ՇԽԱՆԴԱԿԻ ՑՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ

112. ԲԳ. Միլիցիայի յուրաքանչյուր աշ-
խատակից պետք ե աղնվորեն կրի իր կո-
չումը, հեռու մնա ինքը և իր ընկերներին
հեռու պահի ամեն տեսակ զանցանքներից,
վորոնք արատավորում և դցում են Խոր-
հրդային սոցիալիստական հանրապետու-
թյան քաղաքացու արժանապատվությունը,
և բարեխղճորեն կատարի իր վրա դրված
պարտականությունները :

113. ԲԳ. Միլիցիայի շարքերում գտնվող
աշխատակիցները կարող են լինել «ծառա-
յուր յունից դպրո» և «ծառայության մեջ»
դրություններում. այդ դրություններով ել
վորոշում են նրանց հիմնական իրավունք-
ներն ու պարտականությունները :

114. «Ծառայությունից դպրո» դրու-
թյունը վորոշում և Միլիցիայի աշխատակ-

յի ծառայության պարտականությունների կատարումից ազատ լինելը. իսկ «ծառայության մեջ» դրությունը վորոշում և ծառայության պարտականությունների կատարումը (պարագմունքներ, գործուղումներ, պոստային ծառայություն և այլն):

115. Ծառայությունից դուրս» դրության մեջ գտնվելիս ԲԳ Միլիցիայի աշխատակիցները յենթարկվում են ընդհանուր որենքներին և բոլոր քաղաքացիների համար սահմանված հանրային կարգի բոլոր կանոններին:

116. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները նույնիսկ «ծառայությունից դուրս» դրության մեջ գտնվելիս պարտավոր են աջակցություն ցույց տալ ինչպես իշխանության մարմիններին, այնպես ել անհատ քաղաքացիներին, թեկուղ այդպիսի աջակցությունը պահանջվի նրանց ծառայության գործունեյության ռայոնից դուրս:

117. ԲԳ Միլիցիայի այն աշխատակիցը, վորը մշտակես կամ ժամանակավորապես զեկավարում է ԲԳ Միլիցիայի մյուս աշխատակիցների ծառայության գործունեյությանը և նրանց համար պատասխանավոր:

թյուն և կրում—հանդիսանում և պետ, իսկ նրանք նրա ստորագրյալները:

118. Այն պետը, վորին ԲԳ Միլիցիայի աշխատակիցը յենթարկվում և ծառայության կարգով, թեկուղ ժամանակավորապես—հանդիսանում և ուղղակի պետ, իսկ մերձակոր ուղղակի պետը—անմիջական պետ:

119. Պետկաղմի այն անձինք, վորոնք Միլիցիայի պաշտոնով կրտսեր աշխատակիցների համար չեն հանդիսանում վորապես պետեր—նրանց նկատմամբ հանդիսանում են ավագներ :

120. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները, հանդիսանալով վորապես պետեր, իր սվունք ունեն ծառայության կարգով հրամաններ տալ ու կարգադրություններ անել իրենց ստորագրյալներին և պարտավոր են պահանջվի նրանց հրանցից իրենց հրամանների ու կարգադրությունների կատարումը, անհրաժեշտ դեպքերում կիրառելով ներդրածական միջոցներ՝ ԲԳ Միլիցիայի կարգապահն կանոնադրություններով նախատեսված կարգով:

121. Ստորագրյալները պարտավոր են անհաղաղ և ճշտորեն կատարել իրենց պետքի բոլոր հրամանները:

122. Յեթե ստորագրյալն ստացած հրամանը հանցագործ հրաման եւ համարում, այն ժամանակ անմիջապես զեկուցում եւ այդ մասին ստորագրասության կարգով հետևյալ պետին, իսկ յեթե հնարավոր չե, զեկուցում եւ տեղակուն գործառիլ կոմիտեի կամ խորհրդի նախագահին՝ զեկալարիկելով տեղի ունենալիք հանցագործությունը արագորեն կանխելու անհրաժեշտությամբ:

Իսկ յեթե ստորագրյալն ստացած հրամանը համարում եւ հանդամանքներին անհամապատասխան, վորապիսի հանդամանքներն արդեն փոխվել են հրամանն ստանալիս, այն ժամանակ զեկուցում եւ այդ մասին հրաման տվող պետին եւ, յեթե հրամանը նորից կրկնի տեսքը, կատարում եւ, հարկադր գեպքերում զեկուցելով վերադասության կարգով:

123. Ծառայության վերաբերյալ գործերով ԲԴ Միլիցիայի աշխատակիցները պետք եւ դիմեն իրենց անմիջական պետին. վերադասության կարգով հետեւյալ պետին դիմել թույլ եւ տրվում միայն անմիջական պետի թույլտվությամբ:

124. Վոչ ծառայության գործերով ԲԴ Միլիցիայի աշխատակիցները կարող են գե-

մել բոլոր պետերին վորպես մասնավոր բանակցություն կամ գրադրություն, առանց այդ մասին իրենց անմիջական պետից թույլտվություն ստանալու:

125. Ծառայության գործով ստորագրյալներն ու պետերը մեկմիեւ դիմելիս տալիս են պաշտոնի անունը. որինակ՝ ընկ. միլիցիոներ, ընկ. տեսուչ, ընկ. պետ, ընկ. հրամատար և այլն:

126. Ծառայության կարգով պետը ստորագրյալին դիմելիս, յերբ ստորագրյալը շարքում չի գտնվում, և յեթե պետը գրդիարկ ունի հաղած, միշտ ձեռքը զնում ե գլխարկին և իսկույն ցած թողնում. դրան ստորագրյալը պատասխանում ե նույնապես ձեռքը զնելով գլխարկին և ցած թողնելով: Եռոյն կանոններն են պահպանվում, յերբ ստորագրյալն ե դիմում պետին:

127. Պետերին վողջունելու համար, վորոնք հանրակացարան են կամ այլ սենյակներ են մտնում, վորտեղ ԲԴ Միլիցիայի աշխատակիցները հավաքվել են պարագմունքների, խորհրդակցությունների համար և այլն, ներկա յեղողներից ավագը հըսաման ե տալիս «զգաստ»:

128. «Զգաստ» հրամանը տալիս են և

գեկուցում միայն պետի առաջին այցելու-
թյան ժամանակ տվյալ որպա ընթացքում :

129. Չորսանոցներում տեղավորված
ժամանակ, այցելող պետին, նույնպես և
այս կանոնադրի 230-րդ հոդվածում հիշ-
շատակված անձնավորություններին վող-
ջունելու համար «զգաստ» հրամանը տրը-
վում ե բացառապես առավոտյան ստուգու-
մից մինչեւ ժամի 21-ը։ Մնացած ժամա-
նակ, նաև ճաշի ընդմիջումի ժամանակ
«զգաստ» հրամանը չի տրվում, սակայն
ներկա գտնվող պետերից ավագը, իսկ նրա
բացակայության դեպքում պատասխանա-
տու որպապհը պետք ե ներս մտնողին զե-
կույց տա (ռապորտ)։

130. Հիմնարկություններում և նրանց
մասերում պարապմունքների ժամանակ,
վողջունելու համար հրաման չի տրվում,
պետի ներս մտնելու առթիվ աշխատանքը
չի գաղաքում։ Տվյալ հիմնարկության պետը
(բաժնի, մասի պետը և այլն), վորտեղ ներս
և մտել յեկած պետը, ներկայանում ե նրան
և ուղեկցում հիմնարկության մեջ։ Ենթե
պետը դիմում է աշխատակիցներից վորու-
թեկին, վերջինս նրան պատասխանելու հա-
մար կանոնում ե, իսկ յեթե դիմարկը գըլ-

իսին ե, ձեռքը դնում ե դիմարկին և իսկույն
ցած թողնում։

131. Պետի զորամասին մոտենալիս, վո-
րը շարքում ե գլուխում, զորամասի պետը
վողջունելու համար հրաման ե տալիս, դի-
մավորում ե յեկած պետին և, կանգ առնե-
լով նրանից 3 քայլել վրա, ներկայանում ե
նրան՝ «այսինչ զորամասի պետ» (աղդա-
նուն)։ զեկուցում ե թե ինչ զորամաս ե և
ինչ ե կատարում, մնալով նրա մոտ մինչեւ
նրա հեռանալը կամ մինչեւ նրա կարգադր-
ությունը։

Նույնը կատարում ե զորամասի պետը
և այն դեպքում, յերբ զորամաս են զալիս
ԽՍՀՄ, ԱՍԽԽՀ, ՀՍԽՀ կենտրոնական Գոր-
ծադիր կոմիտեների, Ժողովրդական Կոմի-
տարների Խորհուրդների նախագահները,
Խաղմժողկոմը և նրանց տեղականները։
Նույնպես և տեղական գործադիր կոմիտե-
ների և քաղխորհուրդների նախագահները։

132. Յերբ պետը կամ 131 հոդվածում
հիշատակված անձնավորությունները դի-
մում են շարքում գտնվող ԲԴ Միլիցիայի
աշխատակիցներին, վերըններս նրան պա-
տասխանում են—վողջունելուն՝ «քարի»,
յերբ չնօրհակալություն և հայտնում—

«ծառայում ենք աշխատավոր ժողովրդին»,
զորեւ բան չնորհավորելիս՝ «շնորհակալ
ենք» և յերբ պետը մնաք բարեւ և ասում
—«գնայք բարով!»:

133. Յերբ նախավերջին հոդվածում հիշատակված պետերն ու անձնավորությունները հարցումով դիմում են շարքում դանշվող ԲԳ. Միլիցիայի աշխատակիցներին, վերջիններս պատասխան են տալիս առանց փոխելու գենքի դրությունը և առանց ձեռքը դիմարկին դնելու:

134. ԲԳ Միլիցիայի բոլոր աշխատակիցները մեկ-մեկու դիմելիս պետք է առն «դուք»:

135. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները միշտ պետք է հաղնված լինեն մաքուր, և վայելուչ: «Ծառայության մեջ» դրությունում ԲԳ Միլիցիայի աշխատակիցները պետք է իրենց հառկացված տարազով (ֆորմա) լինեն, համապատասխան տարբերության նշաններով և ունենան իրենց վրա իրենց համար հատկացված զենքը և համապատասխան ծառայության վկայական:

136. Թույլ չեւ արվում միլիցիական տարազը խառնել վոչ-միլիցիական տարազի հետ:

137. ԲԳ Միլիցիայի աշխատակիցներին թույլ եւ արվում քաղաքացիական հագուստ հագնել միայն այն գեղագում, յերբ նրանք դոնվում են «ծառայությունից դուրս» դըրության մեջ, բացի միլիցիայի զորամասերի այն աշխատակիցներից, վորոնք տեղափորված են զորանոցային կարգով և բացի ԲԳ Միլիցիայի զպրոցական հաստատությունների ունկնդիրներից (слушатели): Վերջիններս դոնվելով իրենց զորամասի կամ զպրոցական հաստատության վայրում, թեկուղ ծառայության պարուականություններն ել կատարելիս չլինեն, պետք եւ իրենց համար հատկացված հագուստն ունենան հագուստ:

138. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները հասարակական վայրերում դոնվելով, «ինտերնացիոնալ» յերդելու և նվազելու ժամանակ կանգնում են. սնդվորում, յերբ միլիցիական տարազով են և գլխարկ ունեն հագած, ձեռքը դնում են զլիսարկին և կանգնում են այլ դրությամբ մինչեւ յերդի կամ նվազածության վերջը:

2. ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԸ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՑԻ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ
ՄԱՍԵՐՈՒՄ

139. ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԵ-
ՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԵՐԱՊՈՐԵՆ ԿԱՊՎԱՃ և ՄԻԼԻՑԻԱՅԻ
ԱԺԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՏՈՎԼ ՄԻԼԻՑԻԱԿԱՆ ԾԱ-
ՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՎՐՄԱՆ ՀԵՏ այդ պատճա-
ռով ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ պետք է դրված լինի այնուիսի պայ-
մանների մէջ, վորոնք կապահովեն միլի-
ցիայի մարմինների վրա դրված Փունկցիա-
ների ամենից ավելի լիակատար ու անարդել
կենսագործումը և կհասցնեն նրանց աշխա-
տանքի մէծագույն արդյունավետությանը :

140. Նայած ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ աշխատակից-
ները ինչ կարգով են տեղավորված, նրանց
միլիցիական ծառայությունը լավագույն
կերպով կատարելու համար սահմանվում է՝

1) ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ՝ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ հիմնար-
կություններում և մասերում և

2) ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ՝ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ զորա-
ժամանում, վորոնք տեղավորված են զորա-
նոցներում :

ա) ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԸ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ հիմնար-
կություններում և մասերում

141. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԴՀԱ-

ՅԸ ՊԱհմանվում և հիմնարկության կամ
մասի պետի կողմից և հայտարարվում և
նրա հրամանում կամ գրավոր կարգադրու-
թյամբ :

142. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ բաշխը-
վում և նկատի ունենալով ծառայության
առանձնահատկությունները, տեղական
պայմանները և այլն :

143. ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ աշխատակիցները
պարտավոր են ծառայության գալ ներկա-
յանալ հիմնարկության և մասի պետի կող-
մից սահմանված ճիշտ ժամանակին և չհե-
ռանալ մինչեվ ծառայության վերջը :

144. ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ աշխատակիցների
ժամանակին ծառայության գալու և ծառա-
յությունից վերադառնալու վրա հսկողու-
թյունը դրվում է նրանց անմիջական պետե-
րի վրա :

145. ՄԻԼԻՑԻԱՅԻ աշխատակիցների ժա-
մանակին ծառայության գալու և ծառա-
յությունից վերադառնալու վրա կոնտրոլի
ձեռքը սահմանվում են հիմնարկության
կամ մասի պետի կողմից :

146. ՄԻԼԻՑԻԱՅԻ աշխատակիցների պար-
տականությունների բաշխման և այդ պար-
տականությունները կատարելու կարգի մա-

սին հայտարարվում ե հրամանում կամ վա-
րոշվում ե առանձին հրահանգով :

147. Վարչության՝ մասի պետերը պար-
տավոր են միջոցներ ձեռք առնել, վորպես-
պի աշխատանքն ընթանա տուանց դժվարու-
թյունների և առանց խանդարումների :

148. Ժամանակն արդյունավետ ոգտագոր-
ծելու համար հաճախորդներին պետք է
հայտարարել (աչքի ընկնող տեղերում հայ-
տարարություններ փակցնելով) այն մա-
սին, թե ԲԳ Միլիցիայի առյալ մարմնի այս
կամ այն աշխատակիցը յերբ, վորտեղ և
ի՞նչ գործերով է ընդունում :

149. Միլիցիայի այն աշխատակիցները,
վորոնք հաճախորդներից դիմումներ ընդու-
նելու և տեղեկանքներ տալու գործն են վա-
րում, պետք ե հաճախորդներին պատաս-
խանեն քաղաքավարի և իրենց աշխատանքն
այնպես տանեն, վոր հաճախորդներին ավե-
լորդ տեղը չպահեն հիմնարկության մեջ :

150. Պարապմունքների ժամերին աշխա-
տակիցներից և վոչ մեկը, առանց իր ան-
միջական պետի թույլտվության, իրավունք
չունի բացակայելու հիմնարկությունից
կամ մասից :

151. Պատասխանատու պաշտոնատար ան-

ձերը բացակայելու բոլոր դեպքերում պար-
տավոր են թողնել իրենց փոխարինողներ :

152. Միլիցիայի հիմնարկությունների և
մասերի չենքը հարմար պիտի լինեն նը-
րանցում պարապմունքներ կատարելու հա-
մար. պետք ե ունենան բավականաչափ տա-
րածություն և ողի կուրատուրա՝ աշխատա-
կիցների տվյալ քանակը տեղափորելու հա-
մար, և պետք է համապատասխանեն ընդ-
հանուր պահանջներին՝ նրանց սարքաւոր-
քան, կարգին ու ժաշուր ու ահելու աեսա-
կետից :

153. Աշխատակիցների ներքին տեղա-
վորումը պետք է կատարել այն հաշվով,
վոր ավյալ չենքի տարածությունն ու ողի
կուրատուրան համապատասխանեն այդ չեն-
քում ապրող մարդկանց քանակին :

Ցուրաքանչյուր սենյակում պետք է կախ-
ված լինի այդ սենյակում յեղած գույքի
ցուցակը :

154. Զերբակալվածների և հարբածների
լրջանալու համար կամերաները պետք ե
ըստ հնարավորւթյան դանվեն առաջին հար-
կում :

155. Որապահի սենյակում, բացի անհը-
րաժեշտ սարքավորումից (սեղաններ, աթոռ-

ներ և այլն) պետք ե լինի հեռախոս և ազ-
դանշանային հարմարանքներ, յեթե այդ-
պիսիները սահմանված են: Այդտեղ նույն-
ով հատուկ վիտրինաներում պետք ե փակ-
ցնել քաղաքի (ռայոնի) հատակագիծը
(պլանը), անհրաժեշտ հասցեների և հեռա-
խոսների ցանկը և այնպիսի տեղեկություն-
ներ, վորոնք անհրաժեշտ են որապահի հա-
մար: Կողմանակի մարդկանց պետք ե արգե-
լել փակոցի (բարյերի) մյուս կողմն անց-
նել:

156. Որապահության սեկյակի մի ժաման,
վորը հատկացվում ե հաճախորդների հա-
մար, պետք ե ունենա բավական թվով նստե-
լու տեղեր: Այդ ունյակում նույնպես հատուկ
հարմարեցրած վիտրինաներում պետք ե
փակցնել տեղեկություններ և այն հարցերի
մասին, վորոնց առթիվ քաղաքացիներն առ-
մենից հաճախ են դիմում միլիցիային: ինչ-
պես որինակ՝ անձնական վկայական տալու
կարգի, քաղաքացիներին գրանցելու մասին
և այլն:

157. Սենյակները կանոնավոր ե մաքուր
պահելու հսկողությունը դրվում ե հիմնար-
կությունների և մասերի պետերի վրա:
Սենյակները մաքուր պահելու համար նշա-

նակվում են համապատասխան անձինք (հա-
զարդողներ, վառարան վառողներ և այլն):

158. Բոլոր սենյակներն ամեն որ պետք ե
ժամանել ավելով և թաց չորով սրբնել փոշին՝
դրա համար հատուկ նշանակված ժամանա-
գիր համար հատուկ նշանակված ժամանա-
կին. փայտե հատակները պետք ե լվալ կամ
պարկետի հատակները շփել վոչ պակա-
ղեկաղում մեկ անդամ: Սենյակները մաք-
րելուց հետո, պետք ե ողափոխել:

159. Սենյակներում պետք ե լինեն թքա-
մաններ՝ լցրած ջրով կամ հականեխիչ հե-
ղուկով, պետք ե լինեն ուրնաներ, զամբյուղ-
ներ և արկղներ մուսորի համար: Թքաման-
ները, ուրնաները զամբյուղները և արկղե-
ները պետք ե մաքրել ամեն որ:

160. Շենքերի մուտքերի առաջ պետք ե
վառքերը մաքրելու քերիչներ ունենալ, վե-
նել ծլոտից կամ պարանից պատրաստած
մաքրիչներ վոտքերը մտնելիս մաքրելու հա-
մար:

161. Արտաքնոցները պահել հարկավոր
մաքրությամբ և լվալ հականեխիչ բաղադր-
րությամբ:

162. Դիվանական աշխատանքների հա-
մար հատկացված շենքում պետք ե ունե-
նալ ջերմաչափ:

163. Շենքում ջերմաստիճանը ձմեռ ժամանակ ըստ Յելսիուսի 18 աստիճանից ցածր և 20 աստիճանից բարձր չպիտի լինի:

164. Բոլոր սենյակներում աշխատանքի ժամանակ և յերեկոները բավարար լույս պիտք է լինի: Աշխատանքը զերծանալուց հետո ուղարկը ժամանակին հանդցնելու հսկողությունը դրվում է հիմնարկության պահաժանակության վրա:

բ) Ներքին կարգը զորանոցներում տեղափոխված ԲԳ Միլիցիայի զորամասերում

165. ԲԳ Միլիցիայի բոլոր աշխատակիցները տեղափոխվում են նրանց համար հատկացված հատուկ շենքերում, վորտեղ կողմնակի մարդկանց թույլ չի տրվում ապրելու, առաջարկման այլպիսի կարգը կոչվում է զորանոցային:

166. ԲԳ Միլիցիայի աշխատակիցների զորանոցային տեղավորումը ամենից հարժան և ներքին կարգը պահպանելու, ուսուցման հաջողության, դաստիարակության և ծառայությունը կատարելու համար. այդ պատճառով այդպիսի տեղավորումը հանդիսանում է ամենից ցանկալի ձեվը:

167. Բավական թվող մարդկանց միաւոեղ կյանքի հարմարության և առողջապահության կանոնները պահպանելու համար այդ զորանոցներում ամբողջ կարգ ու կանոնը սահմանվում է հատուկ կանոններով, վորոնք պարտադիր են այդ զորանոցում թե մշտապես և թե ժամանակավորապես ապրողների համար:

168. ԲԳ Միլիցիայի աշխատակիցները պարաւոր են խնամքով վերաբերել շենքին և նրա մեջ յեղած ամբողջ գույքին ու պահպանել այն փշացումից և հափշտակումից:

169. Նկատի ունենալով տեղավորման բաղմանալիսի պայմանները և միլիցիայի առանձին զորամասերի ծառայությունը, յուրաքանչյոր առանձին զորամասում, հատուկ հրամանով կամ կարգադրությամբ սահմանվում են տեղավորման կանոններ:

170. ԲԳ Միլիցիայի աշխատակիցների զորանոցային շենքերը պետք է լիովին հարժան լինեն նրանցում ապրելու համար և պետք է համապատասխանեն ընդհանուր և սահմանադրական պահանջներին՝ նրանց կառուցման և սարքավորման տեսակետից:

171. Ճաշարանների և ննջարանների հա-

ժար պետք և հատկացվեն առանձին հա-
տուկ սենյակներ :

172. Սենյակները պետք և սարքավոր-
ված լինեն սրացամ կերպով բոլոր անհրա-
ժեշտ դույքով, —մահճակալներով կամ
տախտերով (տապչանկա), սեղաններով,
աթոռներով, պահարաններով, կախարան-
ներով, ջերմաչափներով, բակերով (յեռա-
ցրած ջրի համար), բուրդերով (հրացան-
ների և սառը զենքի համար), պահարաննե-
րով (ատթճանակների համար) և այլն, ին-
պես տարի տախտակների (տարելների) հա-
մաձայն :

173. Զորանոցային սենյակներում պետք ե-
լախաված լինեն՝

ա) տվյալ սենյակում տեղավորված միլի-
ցիայի աշխատակիցների անվանացուցակը.

բ) տվյալ սենյակում յեղած դույքի ցու-
ցակը.

գ) զորանոցային շենքի ներքին կարգու-
հանոնի կանոնները.

դ) տեղեկություններ ողի կուբատուրա-
յի (ծավալի) և մարդկանց թվի մասին, վո-
րոնք փաստորեն տեղավորված են տվյալ
սենյակում, ցույց տալով թե վորքան մարդ-

կարելի յէ կրկին տեղավորել ոյս կանոնա-
դրքի 174-րդ հոդվածի համաձայն :

է) վերակարգերի (նարյաղների) թերթը:

174. Զորանոցում յուրաքանչյուր ապ-
րովի համար պետք ե լինի վոչ պակաս 15
խորանարդ մետր ող. ընդվորում 3 և կես
մետրից ավելի բարձրությունը հաշվի չի
աւնվում: Յեթե յուրաքանչյուր մարդու
համար հաշվում են 3 և կես մետր բարձրու-
թյուն և 15 խորանարդ մետր ող, այն ժա-
մանակ հատուկի տարածությունը ամեն մի
ասլուղի համար 3 քառ. մետրից պակաս չը-
պետք ե լինի:

175. Քաղաքական և կուլտուրական
աշխատանքի համար յուրաքանչյուր զորա-
մասին կից հատկացվում և համապատաս-
խան չենք:

176. Պետերի կազմի համար հատկաց-
վում և առանձին չենք: Կրտսեր պետկազմը
տեղավորվում և շարքային կազմի հետ միա-
սին:

177. Մահճակալները պետք ե դասավոր-
ված լինեն միատեսակ և հավասար շարքե-
րով: Ուգտվելու հարմարության համար
յուրաքանչյուր մահճակալի մոտ պետք ե
ազատ անցք թողնել: Մահճակալներն իրար
հետ միացնեն որդեմում և :

178. Արգելվում և մահճակաները դնել
դրսի պատերի յերկարությամբ կես մետրից
ավելի մոտիկ։ Յուրաքանչյուր մահճակալի
դլիսին պետք և փակցրած լինի փոքրիկ ցու-
ցանուակ, վորի վաս ըրվում և այդ մահճա-
կալի տիրոջ անունը, աղջանունը և անձնա-
կան համարը (№)։ Մահճակալի տակ վո-
չինչ չպետք և պահել։ Ամենաքիչը յերկու
մահճակալի համար պետք և ունենալ մեկ
մահճակալի սեղանիկ։ Գիշերը հանած չո-
րերը պետք և կախիլ կամ դարսել զրա հա-
մար նշանակված տեղում միատեսակ կար-
գով։

179. Զորանոցային շենքում յուրաքան-
չյուր ապօպղի անկողինը պետք և բաղկա-
ցած լինի՝ աղեալից, յերկու սալանից,
բարձից, (բարձի յերեսով) և ներքնակից
(տյուֆակ) լցված ծղոտով կամ մի ուրիշ
հարմար նյութով։ Բացի անկողնու սպի-
տակեղենի պարբերաբար լվանալուց, ներք-
նակի ու բարձի մթելները պետք և լվալ և
ներքնակի ու բարձի ծղոտը փոխել վոչ պա-
կաս տարեկան չորս անգամ։

180. Զորանոցային շենքերում յեղած
գույքը պետք և պահել։

ա) Հրազդակ ու սառը զենքը—զենքն ու

հրամաշաբը պահելու վերաբերյալ գործող
կանոնների համաձայն։

բ) զինասարքը—կախված նշանակված
տեղերում կամ դարսած դարակների վրա։

գ) գրասներն (շինելներն) ու կիսամուշ-
տակները (ՊՈՂԿԱՐԱԿԻ)՝ հատուկ կախա-
րանների վրա, համապատասխան կարգով։

դ) Հանդերձանքի մյուս իրերը—սպիտա-
կեղենը և սեփական իրերը—սնդուկներում,
պահարաններում և զրա համար նշանակված
հատուկ տեղերում։

181. Զորանոցային բոլոր շենքերն ու բա-
կերը պետք և կատարյալ մաքրության մեջ
պահել։

182. Արգելվում և վորեւե բան փակցնել
պատերի վրա։ Բոլոր հայտարարությունն-
երն ու դրավոր կարգադրությունները
պետք և կախել հատուկ տախտակի վրա։

183. Զորանոցային սենյակներում պետք
և լինեն թքամաններ՝ լցրած ջրով կամ հա-
կանեխիչ հեղուկով, այն հաշվով, վոր 10
մարդուն մեկ թքաման ընկնի։ Թքամաննե-
րը պետք և մաքրել ամեն որ։

184. Ննջարաններում արգելվում և ծը-
խել։ Միելու համար հատկացվում է հատուկ
սենյակ, վորտեղ պետք և դնել ջրով

լցրած ռւրնաներ՝ ովանակների մնացրով
ների համար :

185. Արդելվում ե լուսամուտներից կա-
խել սպիտակեղեն, շորեր և այլ իրեր, այլք
սպիտակեղենը բվալ բնակելի սենյակներում։
Սպիտակեղենը լվալու և չորացնելու համար
պետք ե հատկացնել առանձին սենյակ։

186. Զենքը մաքրել այդ նպատակի հա-
մար առանձին հատկացված սենյակում։

187. Լվացարանները պետք ե լինեն տա-
քացվող սենյակներում ննջարաններից ա-
ռանձին։ լվացարաններում մշտական ջուր
պետք ե լինի։

188. Միջանցքներում, իսկ յեթե մի-
ջանցքներ չկան, ուղղակի քնելու սենյակնե-
րում պետք ե խմելու ջուր ունենալ ծորակ-
ներ ունեցող հատուկ փակվող ամաններում։
Ջուրը անպայման պետք ե յեռացրած և պա-
ղեցրած լինի։

189. Խոհանոցում բոլոր ամաններն ու պա-
րագաները պետք ե մաքրել պահել։ աման-
ներն ու խոհանոցային իրերը պահել դրա
համար կորոշված տեղերում։ ամանները
բվալ յեփման ջրով և լավ սրբել չորացնել։

190. Բոլոր ամանները, վորոնց մեջ կե-
րակուր են պատրաստում պետք և կլայեկ-

ված լինեն։ Հատուկ ուշադրություն պետք
ե դարձնել, վորպեսզի պղնձի ամանների
վրա կանաչագույն ոքսիդ (ողիս) նստած
չլինի, վորից թունավորում ե առաջանում։

191. Կերակուր պատրաստելու մթերքները
չարկավոր ե պահել առանձին լուսավոր սեն-
յակներում, դարսել ստեղծների-տախտա-
կամածների վրա կարդով, անպայման ծած-
կել ծածկոցներով և պաշտպանել ճան-
հերից, մանավանդ ամառ ժամանակ։

192. Արտաքնոցները պահել միանդամայն
մաքրել գրության մեջ։ Արտաքնոցի սենյա-
կը միշտ պետք ե մաքրել կեղտից ու կղկը-
ղանքից, ախտահանել, իսկ գիշերները բա-
վական լուսավորված։ Արդելվում ե արտաք-
նոցները տեղավորել ճաշարաններին, խո-
հանոցներին և պարենի պահեստներին մո-
տիկ։

193. Չորանոցային սենյակների մաքրու-
մը լինում ե՝
ա) մաքրել անցուղարձի տեղերը, մահ-
ճականների տակը և մահճակալների միջեվ
անցքերը։

բ) աղբը դուրս տանել թափել դրա հա-
մար նշանակված հատուկ տեղ։

գ) թաց լաթով սրբել լուսամուտների,

դրների, մահճակալների, հրացանների,
հաստարանների, բուրդերի, կախարանների,
վառարանների և առորյա այլ իրերի փո-
շն.

գ) մաքրել լվացարանները և հատակը
սրբել թաց լաթով:

194. Սենյակների ամբողջ մաքրումը կա-
տարում են իրենք միլիցիայի աշխատակից-
ները, զորոնք ապրում են զորանոցային սեն
յակներում, ինքնասուլասարկման կարգով:

195. Սենյակները մաքրուր ու կանոնավոր
պահելու անմիջական հսկողությունը դըր-
վում ե զորանոցային չենքի որապահի վրա:

196. Սենյակները տաքացնելու և լուսա-
վորելու ժամանակն ու նորմաները սահմա-
նում ե զորամասի պետը, նկատի ունենա-
լով աշխատակիցների տեղավորման կարգը
և տաքացնելու ու լուսավորելու սիստեմը:

197. Բնակելի սենյակներում ջերմաստի-
ճանը պետք է լինի 15-ից մինչեւ 19 աստի-
ճան ըստ Յելսիսի:

198. Արդելում և նախորոք վառելա-
փայտը զնել վառարանի մեջ չորանալու հա-
մար, վառելիքը պահել բնակելի սենյակնե-
րում, ցախը չարգել և սղոցել բնակելի սեն-

յակներում, միջանցքներում, խոհանոցնե-
րում և սանդուղքների վրա:

199. ԲԳ Միլիցիայի յուրաքանչյուր ա-
ռանձին զորամասի համար ժամանակի բաշ-
խումը կանոնավորվում ե առանձին մշակ-
ված կանոններով, նկատի ունենալով արվ-
յալ զորամասի ծառայության առանձնա-
հատկությունները և աեղական պայմաննե-
րը: Ներքին կարգուկանոնի կանոնները ար-
տահայտվում են հետեւյալում: —Կերպակուրն
ընդունելու ժամերը, որական պարագմունք-
ների ժամանակն ու կարգը, կողմնակի մարդ-
կանց զորանոցային չենքերն այցելելու,
զորամասի վայրից բացակայելու, արձա-
կուրդ տալու կարգը, զիշերային հանգստի
առավոտյան վերկացի ժամանակը և այլն:

200. Զորանոցային կարդով տեղավոր-
ված ԲԳ Միլիցիայի զորամասերում սահ-
մանվում են առավոտյան և յերեկոյան ստու-
գումներ:

201. Պարագմունքներից և վերակարգե-
րից ազատ ժամանակը ԲԳ Միլիցիայի աշ-
խատակիցները, զորոնք ապրում են զորա-
նոցային չենքերում, իրավունք ունեն ազատ
ժամանակն անցկացնել իրենց հայեցնողու-
թյամբ այնպես, զոր չխանդարեն զորանո-

շում սահմանված կարգը և իրենց հետ ապ-
րող ընկերների հարմարությունները:

202. Արգելվում ե ամեն տեսակ վոգելից
խմիչքներ (անկախ նրանից, թե ինչ թըն-
դություն ունեն) բերել, պահել և խմել զո-
րանոցային սենյակներում, նույնպես և ար-
գելվում ե թղթախաղը և ուրիշ այնպիսի-
խաղեր, վորոնք կապված են նշութական
շահագրգության հետ:

203. Միլիցիայի աշխատակիցների ընդ-
հանուր ժողովներ են գումարվում զորամա-
սի համապատասխան տեսի գիտությամբ և
միմիայն ազատ ժամանակ:

ՅՈՒՂԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

204. Միլիցիայի յուրաքանչյուր աշխա-
տակից առորյա կյանքում պետք ե ձգտի
պահպանել իր մարմինը մաքուր, հագուստը
կանոնավոր՝ նկատի ունենալով, վոր իր
մաքրությունն անհրաժեշտ է վոչ միայն իր
սեփական առողջության համար, այլև իրեն
շրջապատողների համար:

205. Միլիցիայի աշխատակիցների զորա-
նոցային կարգով տեղակորված ժամանակ
սահմանվում ե պարտադիր հաճախում բաղ-

նիք վոչ պակաս ամիսը 3 անգամ։ Մի-
լիցիայի աշխատակիցներին բաղնիք ուղար-
կելու կարգը վորոշում ե զորամասի պետը՝
նկատի ունենալով տեղական պայմանները,
զուգակցելով բաղնիք հաճախելը անձնական
կազմի, հանդերձանքի և շենքի սանիտարա-
կան մշակման հետ։

206. Զորանոցում կամ հանրակացարա-
նում ապրող Միլիցիայի աշխատակիցը ամեն
անդամ հիմանդանալու դեպքում պարտա-
վոր ե զեկուցել այդ մասին իր անմիջական
պետին։ Մասնավոր բնակարաններում ապ-
րող միլիցիայի աշխատակիցները հիման-
դանալու դեպքում հայտնում են այդ մա-
սին իրենց անմիջական պետին զեկուցով
(ուապոր), հետագայում ներկայացնելով
բյուլետեն համապատասխան բժշկական
հիմնարկություններից։

207. Վարակիչ հիմանդությունները կան-
խելու համար, միլիցիայի բոլոր աշխատա-
կիցների համար մացլում ե պարտադիր
կերպով ծաղկի ու համակցված (կոմինի-
րօվանայ) պատվաստում խոլերայի, դե-
ղնատերիայի և վորովայնային տիֆի դեմ։

208. Զորանոցային կարգով տեղավոր-
ված կամ հանրակացարաններում ապրող

միլիցիայի՝ աշխատակիցները ամեն ամիս
յենթարկվում են բժշկական քննության:

209. Զորանոցներում ապրող միլիցիայի
աշխատակիցները, վորոնք ուղարկվում են
բուժական հաստատությունները, իրենց
զենքը, զինասարքը և այն իրերը, վոր ար-
գելված և պահել բուժական հաստատու-
թյան մեջ, հանձնում են զորամասի հրամա-
տարի ցուցումով:

210. Բոլոր Հիվանդացածների և առող-
ջացածների մասին հայտարարվում են հրա-
մանում:

4. ՈՐԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՐԳ

ա) Բնդիանուր ցուցումներ

211. Միլիցիայի վրա դրված պարտակա-
նությունների մշտապես և ժամանակին կա-
տարումն ու ներքին կարգի պահպանումն
ապահովելու համար, բայց Միլիցիայի զորա-
մասներում և Հիմնարկություններում սահ-
մանվում են ամենորյա ծառայության որա-
կան վերակարգ:

212. Որական վերակարգը բաղկացած են
ա) քաղաքի, ույոնի (դյուլական վայրե-
րում) միլիցիայի բաժանմունքի, շարային
ժամանակամատու որապահից:

բ) չարային մասի ոժանդակից (ռեզեր-
վից)։

դ) ընդհանուր միլիցիայի կազմից զամո-
ված ոժանդակից։

դ) այն անձնավորություններից, վորոնք
ընդհանուր և վերատեսչական միլիցիայի
պատասխանին և պահակային ծառայությունն
են տանում։

ե) ախոռի որապահակից։

213. Նայած տնօղական ոլոյմաններին, մի-
լիցիայի համապատասխան պետի կարգա-
դրությամբ որական վերակարգի կազմին
կարելի յետ տալ լրացրցիչ առանձին անձնա-
վորություններ կամ որապահ մասեր։

214. Յուրաքանչյուր հիմնարկության
կամ զորամասի համար համապա-
տասխան պետի կողմից վորոշ ժամանակով
նշանակված որական վերակարգի կազմի մա-
սին հայտարարվում են հրամանում։

բ) Պատասխանառու որապահի ընդիանուր
պարտականուր ցումները

215. Պատասխանառու որապահներ նշա-
նակելու նպատակն են

ա) պահպանել հանրային կարգն ու ան-
վտանգությունը միլիցիայի տվյալ մարմնի
ապահարկության սահմաններում։

բ) պահպանել և բքին կարգը ԲԳ Միլի-
շխյի դրսմասում .

գ) զեկավարել որական վերակարդի կազ-
մի մեջ մտնող անձնավորությունների ծա-
ռայության գործունեյությունը :

ԲԳ Միլիցիայի հիմնարկության կամ դո-
րամասի պատասխանատու որապահ և նշո-
նակվում համապատասխան պետի հրամա-
նով :

216. Պատասխանատու որապահին անմի-
ջապես յենթարկվում և միլիցիայի ամրող
որական վերակարդը, այդ թվում և որապահ
մասը : Համապատասխան պետի կամ նրա
տեղակալի բացակայության ժամանակ պա-
տասխանատու որապահը իրավունք ունի ինք-
նուրույն կերպով ամեն տեսակ կարգադր-
ություններն անել Միլիցիայի այն մարմ-
նի ձեռնհասության (կոմպենտենցիայի),
սահմաններում, վորի համար նա որապա-
հություն և անում :

217. Պատասխանատու որապահը վերա-
կարդում յեղած ամբողջ ժամանակ դուրս
և գալիս ուղղակի ստորագրելությունից և
յենթարկվում և միայն միլիցիայի համա-
պատասխան պետին կամ նրա ոգնակա-
նին :

218. Որապահության մեջ յեղած ժամա-
նակ պատասխանատու որապահը ազատ-
վում ե իր գրաված պաշտոնի համեմատ
ծառայության պարտականություններից և
պարտապմունքներից :

Որապահությունն ընդունելով պատասխա-
նատու որապահը պարտավոր ե՝

ա) հազնիել սահմանիած տարագով (ԱՌ
ֆօրմե) և ունենալ իրեն հատկացված
գենքն ու ծառայության վկայականը .

բ) ընդունել որապահությունը հանձնողից
ստացված վերջին կարգադրությունները,
վորոնք դեռ չեն կատարված, նույնպես և
ստանալ տեղեկություն հատուկ կարելոր
կարգադրությունների մասին .

գ) ընդունել որապահի սենյակում յեղած
ձերբակալվածների և կալանավորվածների
բոլոր փաստաթղթերը և իրերը .

դ) իմանալ սպասարկվող տերիտորիայի
հատակագիծը (պլանը) .

ե) ստուգել կապի առկայությունն ու
սարքինությունը Միլիցիայի այն պետի
հետ, վորին ինքը յենթարկվում ե . ստուգել
կապը միլիցիայի բաժանմունքների, շարա-

յին զորամասերի և վերադաս պատասխանատու որապահի հետ :

զ) տեղեկություններ ստանալ՝

1) միլիցիայի մարդկանց ցուցակով և առկա թվի մասին և նրանց զանազան պատճառներով յելքի մասին,

2) ձերբակալվածների և կալանավորվածների թվի մասին, ձերբակալման կամ կալանքի պատճառների մասին և ում վրա յեն նրանք հաշվառված,

3) պատերի քանակի և նրանց գասավորման տեղերի մասին,

4) որական վերակարդի կազմի մասին,

5) ստանալ ՄՊԲՎ տեղական մարմինների, դատարների և դատախազության, կայազորի պետի վարչության կամ պարետի, հրդեհաշեջ մասերի, բուժական հիմնարկությունների և շուապ ողնության ճիշտ հասցեներն ու հեռախոսների համարները:

219. Պատասխանատու որապահը պարտավոր է գտնվել որապահի սենյակում և իրավունք չունի բայց կայազելու առանց ծառայության վերաբերյալ անհրաժեշտության :

220. Միլիցիայի այն մարմիններում, վորատեղ նշանակվում են որապահի ոգնական-

ներ. վերջիններս որապահի բացակայության ժամանակ, ժամանակավորապես կատարում են նրա պարտականությունները: Այն դեպքերում, յերբ ոգնականներ չեն նշանակվում կամ ծառայության գործով բացակայում են որապահները, իրենց փոխարեն թողնում են վերակարդի մարդկանցից մեկին ավագության կարգով:

Պատասխանատու որապահը թողնելով տեղակալին վոր իրեն փոխարինի, պարտավոր և հատնել նրան թե վորտեղ և դանը փելու ինքը և ինչպես կանչել իրեն:

221. Հանկարծակի հիվանդանալու դեպքում, պատասխանատու որապահը պարտավոր և զեկուցել այդ մասին Միլիցիայի համապատասխան մարմնի պետին կամ նրան տեղակալին բանավոր կամ գրավոր և միայն նրանց թույլտվությամբ կարող և թողնել որապահությունը՝ իր պարտականությունների կատարումը հանձնելով այն անձնավորությանը, վորին ցույց կատարելու:

222. Պատասխանատու որապահը կողմանի անձանց թույլ և ուղիս որապահի սենյակը մտնել ծառայության գործերով ամբողջ որութիշերվա ընթացքում, դիվանատուն մտնել միայն պարապմունքների

ժամերին, ձերբակալվածների կոտնը բառեց
մտնել միայն դատարանի և դատախաղու-
թյան ներկայացուցիչներին: Այլև այն ան-
ձանց, վորոնք հիշատակված են այս կանո-
նագրքի 230-րդ հոդվածում ամբողջ որու-
գիշերվա ընթացքում:

223. Պարապմունքները վերջանալուց հե-
տո, պատասխանատու որապահը զննում է
Միլիցիայի տվյալ հիմնարկության կամ
մասի բոլոր սենյակները, ստուգում ե փա՞կ
են արդյոք դռները, լուսամուտները, հանգ-
ցրած են լույսերը և այլն:

224. Պատասխանատու որապահը անձնում է
կամ իր ողնականի միջնորդվ ընդունում ե ամ-
բողջ ստացած գրությունները: Շտապ վոչ
գաղտնի գրությունները բաց ե անում, իսկ
շտապ գաղտնի գրությունների մասին ան-
միջնապես զեկուցում ե տվյալ հիմնարկու-
թյան կամ մասի պետին:

225. Պատասխանատու որապահի վրա յե-
գրվում որապահության ժամանակ գրքերը
վարելու գործը՝ այլև ծառայության ժամե-
րից գուրս հեռախոսադրերի ընդունումն ու
փոխանցումը:

226. Պատասխանատու որապահի պար-
տականությունն է հսկել չենքի ներքին կար-

գին, զենքի գրությանը ու այն պահելու կա-
նոններին:

227. Ոգնական ունեցող պատասխանա-
տու որապահին թույլ ե տրվում հանդստա-
նալ ընդհանուր առմամբ վոչ ավելի 4 ժամ
որուգիշերվա մեջ, հերթով ոգնականի հետ՝
համապատասխան պետի հրամանով սահ-
մանված ժամերին:

228. Հանդստանալու ժամանակ արգել-
վում է հանգել, վայր դնել զենքն ու զինա-
սարքը: Թույլ ե արվում միայն դուրս գցել
զրատի (շինելի) կամ ըլուզի վզնոցի (վա-
րատնիկի) կոճակները և հանել զվարկը:

229. Համապատասխան հրամանով վո-
րոշված ժամերին պատասխանատու որա-
պահը զեկուցյ ե ներկայացնում տվյալ մի-
լիցիայի հիմնարկության կամ մասի պետին
որ ու գիշերվա ընթացքում յեղած պատա-
հարների մասին:

230. Պատասխանատու որապահը դիմա-
վորում, ներկայանում, զեկուցում և ուղեկ-
ցում ե ներքոհիշյալ անձնավորություննե-
րին:

ա) ԽՍՀՄ, ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ ԿԷՆՏՊՈՐՃ-
ԿՈՄՆԵՐԻ և ԺՈՂՈՎՄԽՈՐՀՆԵՐԻ նախադաշնե-
րին և նրանց տեղակալներին:

բ) Միլիցիայի Գլխավոր վարչության պետին և նրա ողնականին.

գ) տվյալ տերը խորհիայի սահմաններում ռայոնական գործկոմների և քաղաքային խորհուրդների նախագահներին և նրանց տեղակալներին:

դ) բոլոր ուղղակի պետերին և նրանց ուղղականներին, այլև այն անձնավորություններին, վորոնք գալիս են միլիցիայի տվյալ հիմնարկությունը կամ մասը տեսչական գըն նություն կատարելու համար:

231. Յեթև միաժամանակ ԲԳ միլիցիայի պետերի կազմի մի քանի անձնավորություններ են գալիս, պատասխանատու որապահը դիմավորում, ներկայանում, զեկուցում և ուղեկցում և նրանցից ավագին:

232. Շառայության ժամկետից գուրս ստացված գրությունները պատասխանատու որապահը պարտավոր և հանձնել գիվանատուն:

233. Որապահությունը հանձնողն ու ընդունողը ներկայանում են միլիցիայի տվյալ հիմնարկության կամ մասի պետին և զեկուցում որապահությունը հանձնելու և ընդունելու մասին. այլև զեկուցում են այն բոլոր պատահարների մասին, վորոնց մասին անմիջապես չի զեկուցվել: Որապահությունը

ընդունելու և հանձնելու մասին համապատասխան գրանցումն և կատարվում որպատահության մատյանում:

դ) Միլիցիայի բաժանման ունի ուղղական պարտիկուլյար պատահի պարտականությունը:

234. Պատասխանատու որապահը ամբողջ որ ու գիշերվա ընթացքում ընդունում է քաղաքացիներից դիմումներ, տալիս և այլ դիմումների առթիվ համապատասխան բացարություններ, հանցագործությունների առթիվ քննություն և կատարում Քրեական գատավարական որենսգրքի սահմանված կարգով:

235. Միլիցիայի պատասխանատու որպահը պարտավոր ե՝

ա) տեղեկություն ստանալով սպանության կամ ինքնասալանության մասին, հայտնել դատախաղությանը և դատական-բժշկին և ինքն անմիջապես ուղեվորվել պատահարի վայրը.

բ) միլիցիայի տվյալ մարմնի կողմց սպառարկող տերը խորհիայում հրդեհ պատահելու զեկուցում հեռախոսով հայտնել համապատասխան հրդեհաշեջ մասին, կարգադրություն անել միջոցներ ձեռք առնելու մասին հրդեհի վայրում գույքն ու կարգը պահա-

պանելու համար. անհրաժեշտ դեպքում ան-
ձամբ մեկնել հրդեհի տեղը.

գ) տարերային դժբախոռովթյան բնույթ
ունեցող պատահարների ժամանակ (ջրհեղեղ,
վոր սպառնում և բնակիչներին, անասուննե-
րին, գույքի անվտանգությանը, գնացքի
խորտակում, ուժեղ ավերմունք առաջացնող
սպայթյուն կամ թեկուղ խուճապ առաջացնող
սպայթյուն, բնակելի շենքերի փլուզում (օճ-
առ) և այլն) ձեռք և առնում իրենից
կախված բոլոր միջոցները լիկվիդացիայի
յենթարկելու այդ պատահարների հետևանք-
ները, անմիջապես հայտնելով այդ մասին
միջցիայի համապատասխան մարմնի պե-
տին և մյուս անհաջողեցու մարմիններին.

դ) քրեական հանցաղործություններ կա-
տարելու մեջ կասկածելի անձնավորություն-
ներին բերելու գեպօպում, նրանց վերաբեր-
մամբ ղեկավարվում և Քրեական-դատավա-
րական որենսդրքի համապատասխան հող-
քածներով.

ե) պարտադիր վորոշումները խախտող-
ներին բերելիս, նրանց վրաբերմամբ ձեռք
և առնում գրոծող որենսդրությամբ նախա-
տեսված միջոցները.

զ) հարրած գրությամբ ձերբակալված
քաղաքացիներին բերելիս, վեցնում և նը-

թանց Մոտ յեղած թանգարժեք իրերը, ողբամբ
զենքը և այն առարկաները, վորոնցով նա
կարող ե իրեն վնաս պատճառուել մինչև լըր-
ջանալը, այդ մասին պատշաճ ակտ ե կաղ-
մում և արձանագրություն ձերբակալման
մասին։ Ձերբակալվածին աղատելիս վերա-
դարձնում ե նրանից վերցրած իրերը և
ոտացման մասին ստորագրել ե տալիս ակտի
յետևում։

236. Պատասխանութուու որապահը ձերբա-
կալվածներին և կալանավորվածներին ձեր-
բակալման կամերաներն և ուղարկում կամ
ուղարկում և ըստ պատկանելույն համապա-
տասխան մարմինները կամ պաշտոնատար
անձերի մոտ, այդ նպատակի համար կան-
ֆլով անհրաժեշտության դեպքում ուղեկ-
ցավորների (ԿՈՒՅՈՒՐԵ) վերակարգ։

237. Պատասխանատու որապահը հսկում
և ձերբակալվածների և կալանավորվածների
կամերաներում պահելու կարգի վրա. ըն-
դունում և աղատում և նրանց :

փախուստի դեպքում պատասխանատու որա-

238. Կամերաներից կամ ուղեկցավորների
մոտից ձերբակալվածների և կալանավոր-
վածների փախուստի գեպօպում պատասխա-
նատու որապահն անմիջապես միջոցներ է

ձեռք առնուած փախածներին վնասուելու, վորի
համար՝

ա) որական վերակարգի կազմից միլի-
ցիներներ և կարգուած փախածներին հետա-
պնդելու համար, հայտնելով միլիցիայի
մարմիններին փախածների նշանների մասն.

բ) անմիջապես զեկուցում և միլիցիայի
տվյալ մարմնի պետին.

գ) ձեռնամուխ ելինում հետաքննության՝
պարզելու համար փախուատի հանդամանք-
ները և դրա մեջ մեղավոր անձնավորու-
թյուններին:

239. Միլիցիայի ավյալ մարմնի կողմից
սպասարկվող տերրիտորիայում հատուկ կա-
րեր պատահարների դեպքում, ան-
միջապես հաղորդում և այդ մասին միլի-
ցիայի պետին, իր նախաձեռնությամբ և
պատասխանատվությամբ միջոցներ և ձեռք
առնում լիկվիդացիայի յենթարկուու պա-
տահարը: Յերբ պատահարի վայրը ճն դալիս
պետը կամ վերադաս մարմինների ավագ
պաշտոնատար անձինք, կամ տեղական գործ-
կոմի և խորհրդի պաշտոնատար անձինք,
պատասխանատու որապահը իրադեկ և դարձ
նում նրանց պատահարի և իր արած կար-
գադրությունների մասին:

240. Պատասխանատու որապահի պարտա-
կանությունն ե՝ պահպաննել հեղափոխական
կանոն ու հանրային անվտանգությունը
վոչ միայն իր սպասարկությանը յենթակա-
տերի տորիայի սահմաններում, այլ և այդ
տերրիտորիայի սահմաններից դուրս, յերբ
անհրաժեշտ կլինի: Այդ գեղագում պատաս-
խանատու որապահը միջոցներ և ձեռք սո-
նում արագործն զեկուցնելու այր իսախուում-
ները և հայտաբերելու խախտողներին, հա-
զորդելով միաժամանակ այդ պատահարի
մասին միլիցիայի պետին և պատշաճ մար-
միններին: Անհրաժեշտ գեղագում մեկնում և
պատահարի վայրը:

241. Նախքան պոստերն ուղարկելը, պա-
տասխանատու որապահը շարում և պոստերն
ընդունողներին, զննում ե հանդերձանքն ու
զինասարքը, հանձնում ե նրանց հատկաց-
ված զենքը մարտական փամփուշտներով,
հրահանգում և յուրաքանչյուրին առանձին՝
պոստի առանձնահատկությունների մասին
և, լրացնելով պոստային տեղեկագիրը, ու-
ղարկում է նրանց իրենց տեղերը:

Պոստերն ստուգելու ժամանակ պատա-
խանատու որապահը նշումներ և անում պոս-
տային գրքույների մեջ նկատված անկա-
նոնությունների մասին, հնարավորության

դեղքում վերացնում ե այդ անկանոնությունները տեղում :

242. Յեթի պոստերի վրա վերակարդ կատարելիս գալիս են այս կանոնադրքի 230-րդ հոդվածում հիշատակված անձնավորություններից վորևէ մեկը, այդ ժամանակ վերակարդը չի դադարում, այլ վերջանաւուց հետո, պատասխանատու որապահը ներկայանում է յեկողին և զեկուցում՝ «այս ինչ փոխի» (օմեգա) վերակարդ ե կատարել պոստերի վրա, միմյայի այս-ինչ մասից կամ հիմնարկությունից» :

դ) Շարային գորամասի պատասխանատու որապահի պարտականությունները

243. Պատասխանատու որապահը հետևում է, վոր այն անձնավորությունները, վորոնք դորամասից վերակարդի են նշանակված, ժամանակին հայտաբեր:

244. Հետևում է, վոր դորանոցային շենքերում ապրող անձնավորությունները ժամանակին ներկայանան ստուգմանը, պարագմունքներին և բժշկական քննությանը :

245. Յեթի վորևէ զեսպ ե պատահում զորանոցային շենքերում համապատասխան մի-

245. Յեթի վորևէ զեսպ ե պատահում զորամասի հրամանարին :

246. Յեթի հրդեհ ե պատահում զորանոցային շենքում, միջոցներ ե ձեռք առնում հանդցնելու, նախազգուշացնելու այդ շենքում ապրողներին և ձիերին, զենքն ու մյուս զույգը փրկելու, վօրոնց վտանգ ե սպառնում :

247. Պատասխանատու որապահը հսկում ե զորամասում սահմանված ներքին կարդ ու կանոնին բոլոր կանոնների ճշտորեն կատարմանը, զույքի ամրողաւթյան ու պահպանությանը, վորն այդ շենքում ե գտնվում :

248. Հսկում է, վոր մաքուր և վայելուչ ձևով պահեն միջանցքները, սանդուղքները, բակերը և բոլոր սենյակները, վոր ժամանակին լուսավորվեն, ժամանակին վառվեն վառարանները և ողափոխվեն զորանոցային սենյակները :

ե) Որպահ մասի պարտականությունները

249. Որապահ մասը նշանակվում ու փոխադրում ե որական վերակարդի հետ միաժամանակ :

250. Որապահ մասի կաղմը վորոշվում ե նկատի ունենալով շարային զորամասի քանակը և մյուս պայմանները—միլիսիայի համապատասխան պետի հրամանով :

251. Որապահ մասի կազմից վոչ վոք իրաւունք չունի բացակայելու իր դասավորման վայրից առանց պատասխանատու որապահի թույլտվության կամ կարգադրության :

252. Որապահ մասի ամբողջ կազմը պետք է լիովին պատրաստ լինի դուրս կանչելու համար, մարդկի պետք և հագնված լինեն տարարով (ոչ ֆօրմե), զենքը զննված և սարքին դրության մեջ (փամփուշտները տրվում են որապահ մասի, պետին և պահվում են նրա մոտ) : Զիասարքը պետք և պատրաստ լինի ձիերն արագորեն թամբելու համար :

253. Գիշերը որապահ մասի կազմի մեջ մտնող անձինք կարող են հանդստանալ պատկած : Հանդստանալու կարգն ու պայմանները սահմանում են միլիցիայի պետը՝ նայած պարագային :

254. Որապահ մասը մասնակցում է պարագունքներին, յեթե պարապմունքները կատարվում են իր զորամասի տեղավորման վայրում :

255. Դուրս կանչելու ժամանակ (ՎՅԶՕՎ) որապահ մասը գալիս է պատասխանատու որապահի սենյակը, յեթե ներկայանալու

համար մի այլ տեղ ցույց չի արվել : Որապահ մասի պետը ցուցումներ և ստանում պատասխանատու որապահից կամ միլիցիայի պետից այն մասին՝ թե ուր պետք է ուղեղորվել, ինչ նպատակի համար, ում կարգադրության տակ և ում ցուցումներով պետք ե գործել :

256. Առաջադրությունը (задание) կատարելուց հետո, որապահ մասի պետը ներկայանում է պատասխանատու որապահին և զեկուցում ստացված առաջադրության կատարման մասին : Այն դեպքում յեթե պատադրության կատարման ժամանակ զենք և գործադրվել, դրավոր գեկույց և ներկայացնում :

257. Որապահ մասի գուրս կանչելու բոլոր գեպքերի մասին պատասխանատու որապահը գրանցում է կատարում՝ ցույց տալով գուրս կանչելու ժամանակը, պատճառները, որապահ մասի կազմը և գործողությունների հետևանքները :

գ) Ախոռի որավորակի պարտականությունները

258. Ախոռի որավորակ (дневальный) և նշանակվում հեծյալ զորամասի միլիցիոներներից և անիջապես յենթարկվում և զո-

բռմասի պատառխանառու որապահին:

259. Հսկում և ախոռի ներքին կարգին և ախոռն սղասարկող կազմի սահմանված կանոններն ու հրամանները կատարելու վրա. նույնպես և դույքի ամբողջությանն ու ձիերի պահպանմանը:

260. Ախոռի որապահը պարտավոր է իմանալ չարային և գումակային ձիերի առկա թիվը, ախոռում յեղած հիվանդ նորոշնպես և անասնաբուժական կայանում յեղած ձիերի թիվը:

261. Հիվանդացած ձիերի մասին անմիջապես զեկուցում և պատասխանառու որապահին:

262. Ախոռում տեղի ունեցող վորևե պատահարի մասին անմիջապես հայտնում և զորամասի պատասխանառու որապահին և անհետաձելի միջոցներ և ձեռք առնում:

263. Հետևում ե, վոր ձիերը լավ կապված լինեն—ցերեկը՝ կարճ, խսկ գիշերը՝ յերկար յերասանակով (ՊՈՅՈԴ):

264. Ներկա յե գտնվում կերը բաժանելու և ջրելու ժամանակ:

265. Հսկում ե, վոր ճանապարհոց վերաբերած ձիերը մաքրված լինեն, վոր նրանց չջրեն և չկերակրեն վարսակով մինչև այդ մասին չպատվիրեն, վոր վերաբերածող

ձիերի ձիասարքը մաքուր լինի և դրված լինի իր տեղում:

266. Թույլ չի տալիս վոչ վոքի ձիերին հանել ախոռից առանց զորամասի պատասխանառու որապահի թույլտվության:

267. Հսկում ե ախոռի կարգ ու կանոնին, ողի մաքրությանը, վորպեսզի միջանցիկ քամի չլինի, ախոռներում, այլ և ախոռներին մոտիկ վոչ վոք չծխի և կրակ չանի, վորպեսզի մութը և գիշեր ժամանակ ախոռները լուսավորված լինեն:

268. Թույլ չի տալիս առանց ծառայության գործով հալաքվել ախոռներում:

269. Ցեթե հրդեհ և պատահում ախոռում կամ ախոռին մոտիկ, միջոցներ և ձեռք առնում փրկելու ձիերին և դույքը, հանդընելու հրդեհը և հայտնում և այդ մասին զորամասի պատասխանառու որապահին:

5. ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՎՈՐՊԵՍ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՄԻԶՈՅ, ԿԱԼԱՆՔԸ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

270. Միլիցիայի աշխատակցին կարգապահական կարգով կալանավորելու ղեպքում կալանքը կրելու համար միլիցիայի համապատասխան վարչության հրամանում հայտաբերուց հետո :

271. Միլիցայի աշխատակիցների կողմից
կալանքը կրելու համար միլիցիայի հա-
մապատասխան վարչությանը կից հատկաց-
վում ե դրա համար հատուկ հարմարեցրած
սենյակ :

272. Թուլ. չի տրվում կարգապահական
կարգով կալանավորված միլիցիայի աշխա-
տակիցներին կալանքը կրելու համար պա-
հել միլիցիայի մարմինների կողմից ձերբա-
կալվածների ընդհանուր կամերայում :

273. ԲԳ միլիցիայի պետերի կազմի ան-
ձանց կալանքի տակ են պահում շարքային
կազմից առանձին :

274. Միլիցիայի աշխատակիցները կա-
լանքը կրելու վայրն են գնում ինքնուրույն
(առանց ուղեկցակամբի) :

275. Այն դեպքերում, յերբ հիմք կա յեն-
թագրելու, վոր միլիցիայի աշխատակիցը
կարող ե չկատարել կալանքը կրելու կար-
դադրությունը, թույլ ե արվում նշանա-
կել ուղեկցակամբը (ԿՈՒՅՈЙ) կալանքը
կրելու վայրն ուղարկելու համար :

276. Միլիցիայի աշխատակիցին կալանքը
կրելու համար կալանքի տեղի ուղար-
կելու կազմվում ե համապատաս-
խան պաշտոնագիր (служебная записка)
ցույց տալով կալանավորվածի պաշտոնը,

անունը, հայրանունը, ազգանունը, ով է
կալանավորել, ինչի համար և վորքան ժա-
մանակով, կցելով կալանքի մասին հրամաւ-
նի քաղվածքը :

277. Միլիցիայի այն աշխատակիցները,
վորոնք կալանքի յեն յենթարկված ծառա-
յության պարտականությունների կատարու-
մով, կալանավայրն են ուղարկվում ծառա-
յության պարտականությունները կատարել
վերջացնելուց հետո և պատ են արձակվում
մինչև պարապմունքներն սկսելը կամ մինչև
պրատն ընդունելը յերկու ժամ առաջ :

278. Կալանք կրող միլիցիայի աշխատա-
կիցները կրում են հատկացված տարապը
միայն առանց վենքի :

279. Միլիցիայի կալանավորված աշխա-
տակիցներից վերցնում են բարոր իրերը, բա-
ցի առաջին անհրաժշտության առարկանե-
րից, անհրաժեշտ Հաղուստից, անկողնու և
ըլացվելու պարագաներից, գրքերից և գրե-
նական պիտույքներից :

280. Կալանքը կրողներից վերցրած իրերի
համար առանձին ցուցակ են կազմում և
վերադարձվում են այդ իրերը ազատվելուց
հետո, ստորագրել տալով ստացման մասին :

281. Կալանք կրող աշխատակիցներին
թույլ ե տրվում ծխել, չախմատ և շաշկի

թաղալ և այլ խաղեր, վորոնք կտպված չեն
նյութական շահագրգության հետ:

282. Կալանքը կրելուց հետո միլիցիայի
աշխատակիցներին ուղարկում են ծառայու-
թյան վայրը, վորի մասին հայտնում են
կալանք նշանակող անձնավորությանը:

6. ԶԵՆՔԻ ՊԱՀԵԼԸ

283. Միլիցիայի աշխատակիցը պատաս-
խանատու յե իրեն հանձնած դեպքի ու փամ-
փուշտների պահպանության և սարքինու-
թյան համար: Այդ պատճառով, միլիցիայի
աշխատակիցը ինչ պայմաններում ել ուղում
և լինի, պարտավոր և հոգ տանել իր մոտ
յեղած դենքը ինամելու մասին և պահել այն
մշտապես մաքուր և սարքին:

284. Կատեղորիկ կերպով արգելվում է
աննպատակ, վոչ իսկական ծառայության
կարիքի համար ծախսել փամփուշտները:

285. Զենքի և փամփուշտների փչացնելու
կամ կորցնելու դեպքում միլիցիայի աշխա-
տակիցը պարտավոր և զեկուցել այդ մասին
իր պետին:

286. Բոլոր պետերի պարտականությունն
եւ սիստեմատիկ կերպով հսկել զենքի ճիշտ
պահելու, և խնամելու վրա:

287. Նախքան ծառայության գուրս պալը

միլիցիայի յուրաքանչյուր աշխատակից
պարտավոր և զննել զենքը և համողվել, վոր
նա պատրաստ ե մարտի համար:

288. Զենքը պահելու կարգը ու խնամելը
կատարվում ե հատուկ հրահանգով:

7. ՄԻԼԻՑԻԱՅԻ ԶԱՍԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԵՂԱՎՈ-
ՐՈՒՄԸ ՅԵՎ ԶԵՎ ԶԵՐԻ ԽՆԱՄՔԸ

ա) Զիերի տեղավորումը, ախոռների կա-
ռուցումն ու պահելը

289. Զիերը տեղավորվում են միլիցիայի
համապատասխան սարքավորված ախոռնե-
րում: Զիերի համար ձիատեղերը (ՃԵԿ-
Կ, ԾՈԱԼՕ) պետք ե այնպես կառու-
ցել, վոր մեկուկեսից մինչև յերկու մետր
լայնություն ունենան և վոչ պակաս 3 մետր
յերկարություն: Զիերի անցուղաքի համար
պետք ե անցք թողնել $1\frac{1}{2}$ մետրից վոչ պա-
կաս տարածություն:

290. Յեթե հարաւոր չե այնպիսի ձիա-
տեղեր կառուցել, վոր բաժանված լինեն
իրարից բավականաչափ փակոցներով (բար-
յեր), այն ժամանակ թույլ ե տրվում ձիերին
բաժանել իրարից ձողերով, վորոնք քանի
ունում են դեպի մսուրը բարձր են լինում,
իսկ քանի դեպի ձիերի յետերի վոտքերի կող-

մը շածը . ավելի լավ է այդ ձողերը կախովի
և հօնովի անել . այս դեպքում ձիատեղերի
չափերը պետք ե ողահապանել :

291. Ախոռների համար հատկացվող ու
հարմարեցվող մարդկները (սարա) վոր-
քան հնարավոր ե պետք և բարձր լինեն
գետնից : Ցածը ախոռներում հարկավոր ե
քիչ թվով ձիեր տեղափորել , վորպեսզի նը-
րանցից յուրաքանչյուրի համար բավական
քանակով մաքուր ող լինի :

292. Կրծելու սովորություն ունեցող
(կրծան) ձիերին ախոռներում առանձին
պետք ե կապել , հեռացնելով նրանց մոտից
այն ըրլոր իրերը , վորոնք նպաստում են այդ
սովորության զարդարմանը : Յերեկը նրանց
պետք ե յետ դարձնել դվառով դեպի ախոռի
մեջտեղը և կրծող ձիերին չպետք ե կապել
յերիտասարդ ձիերի մոտ , վորոնք հեշտու-
թյամբ են ընդունում այդ սովորությունը :

293. Դժբախտ դեպքերի առաջն առնելու
համար , կծան և չար հովատակներին պետք
ե կապել առանձին կամ խուլ ձիատեղերում՝
բավականաչափ միջնորմներով և յերկու
պահանգով (закլածկա) նրանց ձիատե-
ղերի մոտ պետք ե առանձին նշաններ անել :

294. Ախոռները մութ չպետք ե լինեն :
Լուսամուտները պետք ե կառուցել այնպես ,

վոր լույսն ուղղակի ձիու աչքերին չընկնի և
ձիերը չկարողանան հասնել լուսամուտնե-
րին : Առաստաղի միջով ցուրտ չպիտի անց-
նի և փոշի չթափավիլի , անձրև գալիս չկաթի :

295. Դոները պետք ե դեպի դուրս բացվեն
և այնքան բարձր ու լայն լինեն , վորպեսզի
առանց արդիկլքի թամքած ձիերը վուրս գան
ու ներս մտնեն : Յեթե գոները ճեղքեր ու-
նեն , գրսի կողմից խմբել ծղոտե խորիներ .
դուան շեմքը այնքան ցածը անել , վոր ձիե-
րի վոտքերը չկպչեն (թափարս չառնեն) :
Շեմքի յերկու կողմից լցնել հող կամ կավ
շեմքին հավասար :

296. Ախոռի հատակն ու անցքը պետք ե
կավածածկ լինի (բայց վոչ փայտից) , հա-
վասար , մի քիչ թեք դեպի ձիու յետեղի
վոտները : Քանդքնդված ու խոնավ տեղերը
ամեն որ հավասարեցնել և չորացնել , լցնել
ալազով :

297. Ախոռը զբաղեցնելիս հատակը պետք
ե հավասարեցնել : Յեթե հատկացված ա-
խոռներում առաջուց ձիեր կամ այլ անա-
սուններ են պահել , անհրաժեշտ ե , բացի
հավասարեցնելուց , ամբողջ հատակից վերց-
նել մի շերտ հող և լցնել ավաղ կամ կավով
տոփանել (զարմանաթ) : Մեզը անց-
նելու համար պետք ե ակռոններ թողնել :

298. Այն ուայսններում, վորտեղ ախոռ
ներն ու մարադները կառուցում են հյուսած
ցանկից, նրանց չատ տաք պահելու համար
հարկավոր և հյուսվածքների միջն լցնել
հարգ կամ հող և կամ պաշտպաննել ինդեգնով
(տրոստնիկ), բայց յերեք աղբ չկիտել:
բով (տրոստնիկ), բայց յերեք աղբ չկիտել:
Ներսի պատերը պետք ե հարթ լինեն և զոր-
քան հնարավոր և սվաղած կալով: Առան-
ձին ուշադրություն պետք ե դարձնել, վոր
պատերի վրա մեխեր ըլինեն:

299. Կերի մսուրներն այնպիսի բարձրու-
թյան պետք ե կառուցել, վոր ձին ազատ
կերտով կարողանա կերն ուտել գլուխը պա-
հելով նորմալ. դրությամբ: Խոտի համար
ցանցեր կախել ձիերի գլախն արգելվում ե:

300. Կրծող ձիերի համար մսուրներ պետք
ե չինել հատակի վրա կամ բոլորովին չշի-
նել:

301. Ախոռներում գլխավոր ուշադրու-
թյունը պետք ե դարձնել մաքրության վրա,
մանավանդ ողի մաքրության վրա: Դրու-
համար անհրաժեշտ ե, վորքան հնարավոր
ե, հաճախ որբել ախոռները և գուրս թա-
փել աղբը, առանց կիսելու ախոռներին մո-
տիկ, այլ դրա համար ցույց տրված տեղում:
Մեզը պետք ե մաքրել ու դուրս թափել ա-
խոռից վորքան հնարավոր ե հաճախակի:

Ախոռի ողը պետք ե զով լինի՝ գոշ բարձր
9 աստիճանից ըստ Յելյուսի աշնանը,
գարնանը և ձմեռը: Ախոռներում պիտք ե
ջերմաչափ ունենալ:

302. Ձիերին ախոռից հանելու ժամանակ՝
նույնիսկ ուժեղ սառնամանիքին, հարկավոր
ե անսպայման ողափոխել և մաքրել ախոռը.
Ընդվորում չպետք ե չափազանց սառեցնել,
և ձիերին կրկին ներս բերելիս միջանցիկ
քամի չպետք ե լինի:

303. Վոչ պակաս տասնորյակում (դեկա-
տում) մեկ անգամ հարկավոր ե դուրս հանել
բոլոր ձիերին ձիակապարան և խնամքով
մաքրել առաստաղը, պատերը և կերի ար-
կրղները (մսուրները) փոշուց, խոտի կտոր-
տանքներից, հարդիկ, ողը մաքրուր պահելու
համար, ըստ հնարավորության, կախել դիի
(МОЖԿԵՎԵԼԻԿ) ճյուղեր և ամիսը յեր-
կու անգամ փոխարինել նոր ճյուղերով:

304. Նավթի լամպաները, մոմերը և ճը-
րադներն անպայման լապտելների մեջ պետք
ե կախել անվտանգ տեղում և միշտ պահել
արդին դրության մեջ: Արդելվում ե ախոռ
մտնել վառած մրմթվ կամ լուցկիով, ախոռ-
ում վառել կամ հանդցնել լապտելները,
հանել լապտելներից լամպաներն ու մոմերը,
վերցնել լապտելներն ու ման դալ ախոռում.

այլեւ արդելվում և ծինել ախոռում և ախոռին մոտիկ :

305. Լապտեղները դուրս հանել և ներս տանել անպայման վառած։ Ախոռում անձրաժեշտ և ունենալ ջրով լիքը տակառ և դույլ։

306. Ախոռում, բացի փոքրիկ պահարանից կամ բներով արկղից՝ ծիերի թվի համեմատ մաքրելու պահագաները պահելու համար հարկավոր և ունենալ նաև բավական քանակությամբ դույլեր, բահեր, ցախավելներ, պատղարակներ կամ ձեռնադայլեր ազրը դուրս թափելու համար։

307. Ախոռի գարպառները պետք և ունենան պահանդներ (закладки, հորիզոնական հեծաններ) կամ մեկ յերկու հատ այդ պահանդները այնպիսի բարձրության պետք են լինեն չեմքեց, վոր ծիերը չկարողանան թոշել նրանց վրայով կամ նրանց տակովն անցնել։

308. Ախոռներին կից պետք են պատրաստել ամուր ծիակապարաններ (коноязи) ծիերի թվի համեմատ յերկարությամբ։ ծիակապարանը պետք են ընտրել չոր և բարձր տեղ։

թ) Ախոռի մաքրումը

309. Զիերի և ախոռների մաքրելուն հըսկում և պետերի կազմից մեկը։

310. Զիերի և ախոռների առավոտյան մաքրումն սկսվում է՝ ձմեռը—ժամի 6-ին, իսկ ամառը —ժամի 5-ին։

311. Մինչև ձիերի մաքրումը, յուրաքանչյուր մէլլցիոններ զնում և ձիուն և յեթե նկատում են հիվանդության արտաքին նշաններ (յերեկոյան կերը չի կրել, ձին առույգ, զիարթ տեսք չունի), անմիջապես զեկուցում են վերադասության կարգով։

312. Հիվանդության նշաններ ունեցող ձիուն քննում են բժիշկը, և յեթե հաստատվում են, վոր իրոք հիվանդ է, այն ժամանակ հանում են վերակարգից և հաշվում են բժշկվող ձիերի թվի մեջ։

313. Ձիերի զնումից հետո, միլիցիոններները ջրում են նրանց, և յեթե յեղանակը թույլ ետալիս դուրս են հանում փոլածքը, կախում են տոպրակները ձիերի գլխին և մինչև ձիերի վարսակ ուտել վերջացնելը, խոտի խրձերը կախում են ցերեկվա համար, մաքրում են ախոռը։ Նախքան կեր տալը մաքրում են ծիատեղերը, իսկ յեթե թաց կեր են տվել մաքրում են մսուրները։

314. Յերբ ձիերն ուստում վերջացնում են վարսակը, հանում են դվիներից տոպրածէները (տորբի), մաքրում են ձիատեղերը, դուրս են թափում աղբը և կախում են տոպրակները ձիակաղաքանից չորանալու համար: Ախոռները մաքրելուց և ձիերը կերն ուստեղուց հետո, միլիցիոներները ձեռնամուխ են լինում ձիերի մաքրմանը, վորից հետո ծածկում են նրանց սթարներով (ՊՈՊՕ-ԲԱ), հալասարեցնում, թրջում են բաշերը ու ճակատի փունջը, և տալիս են տոպավոտյան հասանելիք խոտը, հավաքում են ձիասարքը: Ձիատեղերն ու անցքերը մաքրել վերջացնելուց հետո, ախոռում ցանում են թարմ ալազ և հանձնում են ախոռի որավորակին մաքրելու պարագաները: Ախոռում են ախոռի որավորակը:

315. Որվա ընթացքում, այսինքն՝ մոտ կեսորին յերկրորդ անգամ են մաքրում ձիերին և ջրում, իսկ յեթե պարապմունք ե կատարվել կամ ձիավարություն, այն ժամանակ ինամքով մաքրում են և կախում վարսակով տոպրակները, և այնուհետև այդ տոպրակները հանում են ախոռի որավորակները: Խոռ քցելու և ախոռները մաքրելու համար նշանակվում ե միլիցիոներ:

316. Յերեկայան մաքրումը կատարվում է

զորամասի հրամանով կամ կարգադրությամբ հայտարարված ժամերին:

317. Հավաքելով փովածքը, միլիցիոներներն նորն են ցանում դիշերվա համար, թիջում են բաշերն ու ճակատի փունջը, կտթիջում են տոպրակները, յերկարացնում են դիշերվա համար յերասանակները, այնպես, դիշերվա համար յերասանակները, վոր ձիերը կարողանան պառկել գլուխները հարդի վրա:

318. Ամառվա տաք յեղանակին, յերբ յեկոյան մաքրումը կատարվում է դուրսը, հարկավոր ե ձիերին կանդնեցնել ձիակապարանում և վորքան հնարավոր ե յերկար ժամանակ (մինչեւ ժամի 22):

զ) ձիասարքը պահելու կարգը

319. Ձիասարքը պետք ե ամեն որ թաց լաթով մաքրել և յուղած մահուղի կտորով սրբել, իսկ մետաղի մասերը միայն յուղած մահուղի կտորով սրբել:

320. Յեթե մետաղի վրա ժանդ և յերկում, այն ժամանակ պետք ե մաքրել նավթով: Թամքն ու քրտնքաքաւը ձիավարությունից (օչա) հետո գերադասելի յեւ չորացնել ողում շվաքում, իսկ վատ յեղանակին տիսոներում, Արդելվում ե ձիատն-

բով մաքրել քրտնքաքաշն ու թամբաղեղի
կողափայտերը (լավք) :

321. Թամբերը դարսում են միատեսակ
ձեվով դարակների, իշուկների (կօզլե),
ձողերի վրա, ձիատեղերի մուտքի վերե-
վում, այն ձեվով, ինչ ձեվով ընդունված է
զորամասում, այն ձիերի դիմաց, վորոնց
վրա հարդարված են այդ թամբերը:

322. Խամութները, դանդանավանդները
(մունդշտուկները), սանձերը կախում են
փայտ մեխերից այն ձիերի դիմաց, վորոնց
վրա հարդարված են դրանք. սանձի գլուխ-
ոցները (օրոլուք) չփաթաթել յերասա-
նակներով, զորպեսդի վերջիններս չերկա-
րեն, չծովեն: Զիասարքը խնայելու համար
հարկավոր ե, թեկուզ ամիսը մեկ անդամ,
յուղել ճարպով, ալելի՛ լավ ե թամբի յու-
ղով:

323. Ամեն որ միլիցիոներները զննում են
ամբողջ ձիասարքը և բոլոր անսարքություն-
ների մասին զեկուցում են վերադասու-
թյան կարգով այն պետին, վորը պետք է
ձեռք առնի հարկավոր միջոցները: Անկախ
դրանից, ամիսը մեկ անդամ զորամասի հա-
մապատասխան պետը ձիասարքի մանրա-
մասն զննություն է կատարում:

324. Սանձերը, դանդանավանդները և

խամութները խնամքով հարութարելուց հետո,
պետք ե դրանցվեն ձիերի վրա:

դ) գիում խնամելու ընդհանուր կանոնները

325. Ձին պահանջում է ուշադիր խնամք,
կանոնավոր կեր և պայտվածք, դեպի իրեն
քննուշ վերաբերմունք և համապատասխան
աշխատանք: Խիստ արգելվում է կոպիտ և
մանավանդ անդութ վարվեցողությունը
ձիու հետ: Կոպիտ վարվելու դեպքում ձին
դառնում է չար, վախկոտ, և անվատահ. իսկ
հաստատուն, բայց համբերատար ու գուր-
գուրանքով վերաբերմվելու դեպքում նա չուտ
և ընտելմում: Ձիու համար չափազանց
կարելվոր ե հանգիստը: Զակետք ե անհան-
կարելվոր գլուխութեան, յեթե նույնիսկ ցերեկը
պառկած է:

Ձիու հետ գործ ունեցող միլիցիայի աշ-
խատակիցը պետք ե լավ իմանա ձիու բը-
նավորությունը և դրան համապատասխան
վարվի նրա հետ:

326. Մաքրելու համար յուրաքանչյուր
ձիու համար անհամաժամ և ունենալ՝ խոզա-
նակ, ձիասանր, մահուդի կտոր, փայտե-
մասկ ամբակները մաքրելու համար (մա-
քայլանդ սմբակի սլաքները — (սրելք))

և մաքուր լաթ աչքերը տրորելու համար, Այս ամբողջ պատկանելիքը (պարագաները) պետք է պահվեն ախոռում նրանց համար հատկացված առանձին տեղերում:

327. Մաքրելու համար ձին կապում են կարճ յերասանակով. յեթե նա կծող է կամ կերամանը կրծում է, գլուխը պետք է դարձնել դեպի անցքը և կատել յերկու յերասանակով:

328. Մաքրումը պետք է կատարել խողանակով, սկսելով ձախ կողմից վզի մոտ. յեթե ձին ցեխոս և շատ է քըտնած, պետք է առաջ ծղոտի փնջով տրորել և ապա ձիասնրով մաքրել, բացի գլխից և վլոտքերի ներքեվի մասից. մարմնի այդ մասերին ձիասնրը ցավ և պատճառում:

329 Ամբողջ ձիուն պետք է մաքրել խողանակով, խողանակն ուղղելով բրդի ուղղությամբ և նրան հակառակ. իսկ յուրաքանչյուր յերեք, չորս անդամ ձեռքի շարժումից հետո, խողանակը քսել ձիասնրի առամներին՝ փոչուց և կեղտից մաքրելու համար:

330. Խողանակով մաքրելուց հետո, ձիուն ընդում են թաց մահուրի կտորով; Քթածակերը, սեռական որգանները, յետույքը և վոտքերի ներքեսի մասը ոքտակար ե և պն-

հրաժեշտ ընթանալ ջրով և ապա վատքերը լավ սրբել չորացնել մաքուր մահուրի կը-տորով:

331. Աչքերը պետք է սրբել առանձին մաքուր չորով, մեծ զջուշությամբ՝ իսկ ալելի լավ և բոլորովին ձեռք չտալ, յեթե կարեք չկա:

332. Մաքրելու ժամանակ, այլև ձիավարությունից հետո, պետք է մաքրել սմբակները, մանավանդ սմբակների՝ ուղղեները փայտե դանակով, թույլ չտալով, վոր ազդ մնա սլաքների մեջ, յեթե վոչ կարող և սկսել նեխել:

333. Յեթե ամենավիրքը հնարավորությունըն անդամ կա յեղանակի տեսակետից, պետք է ձիերի մաքրումը կատարել դուրսը՝ ձիակապարանում (ԿՈՆՈԲՅԱՅՑԵ):

334. Յեթե առավոտյան աշխատանք կամ ձիավարություն և նախատեսվում, այն ժամանակ ջրելով ու կերպերելով ձիերին և մաքրելով նրանց, լիակատար մաքրում չեն կատարում, թույնելով աշխատանքից կամ ձիավարությունից հետո:

335. Ձիավարությունից հետո ձիերին պետք է տանել ախոռ ողոները, լուսամուտներն ու ողանցքները փակել, վորպեսզի միջանցիկ քամի չլինի: Արձակում են ձիերին ջանցիկ քամի չլինի:

կամ թաժքերը վերցնում և մարմնի բոլոր մագերը սրբում չորացնում են ծղոտի փնջեռով։ Աչքերն ու քթածակերը սրբում են թաց շորով, ձիերին ծանկում են սմարներով։

336. Լիակատար մաքրումը կատարում են ձիերի հանդստանալուց և չորանալուց հետո, ախոռ բերելուց մի ժամ հետո։

337. Հատուկ հոկողություն պետք է ունենալ այն ձիերի մաքրման և ինստքի վերա, վորոնց տերերը բացակա յեն։

338. Զմեռը, ցուրտ յիղանակին արգելվում և լողացնել ձիերին։

339. Հարկավոր է խիստ և հաճախակի հըսկողություն, վորպեսի տրված խարը (Փուրաժը) լիովին հասնի ձիուն և նա ամբողջովին ուտի այն, վոր վարսակը չթափթափվի, իսկ խոտը չթափվի վոտքերի տակ։ Զի կարելի միանդամից մեծ քանակությամբ կերտալ։

340. Վարսակը պետք է տալ հավասարաչափ, որական յերեք անդամ — առավոտյան, կեսորին և յերեկոյան։ Նախքան ձիավարության դուրս գալը վարսակ պետք է տալ այն հաշվով, վոր մինչև աշխատանքը մի ժամ առաջ կերած վերջացրած լինեն։

341. Զիավարությունից վերադարձած

ձիերին խոտ կարելի յետու խոկույն և թթուկ վարսակ կարելի յետու վոչ շուտ քան յերկու կամ յերեք ժամից հետո միու պետք ե տալ մի քանի անդամ վոչ մեծ բաժիններով։ Ժուտավորապես միատեսակ քաշով։ ընդվուրում կերի մեծ մասը թողնում են զիշերը տալու համար։

342. Կրծող (կրծան) ձիերին վարսակը պետք է տալ տուլբակներով, իսկ խոտը համեմակի լցնել պարանե ցանցի մեջ՝ կտուելով ձիերին յերկու յերասանակով։

343. Կերի որաբաժնի չափը տարվա զանազան ժամանակներում միատեսակ պետք է լինի։ Որպաժինն ավելացնել կամ պականեցնել կարելի յերեք տալ միայն աշխատանքն ավելացնելու ու պակասեցնելու հումքեմատ կամ տարվա մեջանակի համեմատ (ցուրտ ժամանակ ավելացնել կերը)։

344. Ձիերին պետք է ջրել մաքուր և վոչ շտու սառը ջրով։ Ջրել որվա մեջ յերեք անժաման առավոտյան, կեսորին և յերեկոյան, միշտ կերից առաջ։ Ամառն սպասակար և ձիերին ջրել ավելորդ անդամ դիշերված համար։ Վորպեսզի առավոտյան ձիերը քիչ ջուր խցանեն և որվա ընթացքում աշխատանքի ժամանակ չիչ քրտնեն։

345. Աշխատանքից հետո ոտքացած ձիե-

ըին չպետք է ջրել մինչև յերեք ժամ չափութեանց
նի. ծայրահեղ դեպքում, մինչև յերկառ
ժամ չափութեանցնի:

Աշխատանքի ժամանակ, չողին կարելի յի
ձիերին ջրել միայն այն պայմանով, վար
վելուց հետո նրանք անմիջապես չարժման
մեջ մնեն և կարողանան տաշանալ:

346. Չորանոցային կարգով տեղակորզած
ժամանակ մասնավոր մարդկանց ձիերին
չպետք է թույլ տալ չուր խմեն ջլի տաշան-
քից:

347. Հիմանդ ձիերի համար անհրաժեշտ
ե ունենալ առանձին տաշտ, իսկ յեթե կան
ապօվ կասկածելի ձիեր, այդ դեպքում,
յուրաքանչյուր ձիու համար պետք է ունե-
նալ առանձին գույլ:

348. Ամեն անգամ ջրելուց հետո, լուսը
տաշտից պետք է թափել: Տաշտեթը լուս
պետք ե ըլվալ, սրբել ծղոսով, չորացնել և
կործ անել կամ ծածկել կափարիչներով կամ
ֆղոտե խոփներով:

349. Ձիերին պետք է լողացնել վորքուն
հնարագոր և հաճախակի, ավելի լով և յե-
րեկոները, կերը տալուց մի ժամ առաջ: Ա-
ղացնելուց հետո չորացնել ծղոտով:

Չպետք և լողացնել ձիուն սառը ջրավ նե-
տե-

րեց հետո, չուրքա յեղանակին, յեթե նա
տաքացած և գրանած:

350. Առատորներ, չոր ու փովառկ փոված-
քը (պուտիլկա) մեծապես նպաստում
է ձիու առողջության պահպանմանը և արա-
գորնեն վերականգնում ուժերը դժվարին աշ-
խատանքներից հետո: Ցուրտ յեղանակին
փառատ փովածքը առանձնապես անհրաժեշտ

է:

351. Փովածքի համար բայց թողած հար-
գը պետք ե չաղ տալ ձիատեղում հավասար
կերպով: Փովածքը պետք է չաղ տալ յերե-
կոնյան կեր տալուց հետո, ավելացնելով
թարմ փովածք և թողնել մինչև առավատաքան
մաքրումը:

352. Կարելի յն փովածքը դործուծել բնա-
ժայտից, թեմի կամ տորֆ: Փովածքի հատ-
ությունը 9 սանտիմետրից պահաս չպետք
է լինի և ցերեկը ախոռուց դաւրս և բերվում
քամահորելու և չըրացնելու համար լուս-
անների (ստեղաժների) վրա: Իսկ յեթե
անձրեւի և ճյունի ժամանակ հնարագոր յե-
րացնել, լասանների վրա ծածկոցներ
(հավես) չկան, այն ժամանակ փովածքը
պետք է ձիու յերկու կողմից ըրչըել, փո-
վածքի թաց մասը և վթիբը գուրտ թափել:

353. Կանոնակոր պարավածքից նշանագոր

շախով կտիզված և ձիերի խնայքությունը,
դրա համար պայտամածքի վրա պետք և մը
տական ու խիստ հսկողություն ունենալ:

Աշխատանքից վերադարձած ձիերին մաք-
րելու ժամանակ պետք է զննել վորչերը և
ամրակների դրությունը:

354. Բոլոր ձիերը տիետք և պայտամած լի-
նեն ամրող տարին. վերապայտել պետք և
վոչ շուա քան մեկ ամիս և վոչ ուշ քան ա-
միս և կեսում մեկ անգամ. ովետք և պահպա-
ռել հաջորդականությունն, վորպիսզի հար-
կադրված ըինել վերապայտել միաժամանակ
մէծ թվով ձիերի:

Ե) Զիերի դուրս համելը զննության համար
(ВЫВОД)

355. Պետերի ու տեսչական զննություն
կատարող անձերի կողմից զննություն կա-
տարելու համար դուրս են բերում ձիերին։
Զննության համար դուրս ե դամբա ամրող
Հեծյալ զորամասը։ Զիերին կանգնեցնում
են ծառայության ժամկետների համեստ
կամ շարային համրանքով։

356. Պետին դիմավորելու համար Հեծյալ
զորամասը շարվում և մեկ կամ մի քանի սո-
վանի, նայած տեղի հարմարության, կամ
այն անձի ցուցումով, վորի համար ձիերին

զննության են զուրս բերում. մի շանի տա-
գանի կանգնեցրած ժամանակ տողանների
միջն արանքները պետք ե լինի 5-ից մինչեւ
10 քայլ. հավասարության թեփում կանգ-
նում և հեծյալ զորամասի պեսար:

357. Յեթե զննությունը նշանակված է
ըստ ծառայության ժամկետների, այն ժա-
մանակ, ամբողջ հեծյալ զորամասը շարվում
և ձիերին կանգնեցներով ծառայության ժամ-
կետների համաձայն։

358. Զիերին դուրս են բերում զանդանա-
վանդներով (մունզտուկներով) կամ սան-
ձերով. առաջին գեպջում դանդանավանդա-
յին յերասանակները վկին քած, մանեկը,
(гайдка) յերբեք չձգել։

359. Զիերին տեղում պահելու և նրանց
պետի մատից անցկացնելու համար, հարկա-
վոր և առավելապես նշանակել այնպիսինե-
րին, վորոնք այդ ձիերի վրա յեն նստում,
կամ ծայրահեղ դեպջում նրանց, վորոնք
կերակրում են և մաքրում են այդ ձիերին։
Միլիցիոներները կանգնում են ձիերի ձախ-
կողմում, վղին հավասար և պահում են ձիե-
րին աջ ձեռքով, պինդ սեղմած բունցըով
անձի յերկու յերասանակներից, բռունցըը
ձիերի կղակից (подбородок) ցածը՝ ու-
ննելով յերկըօրդ ժատը յերասանակների

միջն՝ յ՛ւասանակների ծայրերը բունցքն
ժեղ սեղմած, ցած թաղտօն վարսէիքի յեղրով:

360. Զիւն պետի մոտից անցկացնելով
պետք և տաել՝ «ոյսինչ ձի կամ այսինչ մաս-
ակ», «այսինչ հասակի», «այսինչ տարի-
քի»: Զին մոտից անցկացնել միշտ կարծ քայլ-
տի և յերեք նրանից առաջ շընկնել:

361. Անհնաղանդ և չար ձիերին թույլ և
արվում պետի մոտից անցկացնել հեծած կամ
ձերկու հողով յերկու յերասանակով:

362. Զիերին զննության հոմար դուրս բեր-
ելիս զորամասը պետք և ունենա իր ձիերի
լրիվ ցուցակը:

գ) Անսամբլումական-սամիտարական
զննություն

363. Զիւկան կազմի անսամբլումական-
սամիտարական զննությունը կատարում և
անսամբլույթը կամ բուժակը:

364. Զննություն պետք և կատարել ամեն-
նաքիչը ամիսը մեկ անգամ:

365. Զանաղան պատճառներով զորամաս
բերվող ձիերի զննությունը պետք և անպայ-
ման կատարի անսամբլույթը կամ անսամբ-
լումակը:

366. Զննություն կատարելու հոմար զո-
րամաս բերած բոլոր ձիերին պետք և ոչ:

առնձնացնել զորամասի մյուս ձիերից և ա-
ռանց անսամբլույթի կամ անսամբլումա-
կի թույլավության չպետք և խսոնել ախոռ-
ուում զորամասի մյուս ձիերի հետ:

367. Զորամաս բերած նորողության ձիե-
րին հարկավոր և պահել զորամասի մյուս
ձիերից մեկուսացրած ախոռում, անպայման
պահելով նրանց, յեղանակի զանաղան փո-
փոխությունների վնասակար ազդեցությու-
նից:

368. Զննության ժամանակի մասին հայ-
տարարվում և միլիցիայի համապատասխան
վարչության կամ զորամասի հրամանում
փամ այդ մասին կարգադրություն և վնասի:

369. Զննությունների ժամանակի պար-
տադիր և հեծյալ զորամասի պետք ներկա-
յությունը, վորն իր ձեռքի տակ պետք և
ունենա ձիերի ցուցակը և անսամբլումա-
կան սամիտարական մատյանը՝ զննության
արդյունքները գրանցելու համար, այլև
պետք և ունենա պայտման տեղիկացիքը՝
Գրանցումը կատարում են անսամբլույթը
կամ անսամբլումակը,

370. Հիմանդ ձիերի հետ պետք և վարվել
այնպիս, ինչպիս ցույց կտա անսամբլույթը
կամ բուժակը:

371. Զննության արդյունքների մասին

անասնաբուժը կամ բուժակը հայտնում ե
զորամտսի կամ միլիցիայի վարչության հո-
մապատասխան պետին :

372. Անասնաբուժի կամ անասնաբուժա-
կի կողմից հայտաբերած բոլոր թերություն-
ները պետք ե վերացվեն պատշաճ պետի
կարգադրությամբ :

373. Յեթե զնության ժամանակ հայ-
տաբերվում ե վարակիչ հիվանդության նը-
շաններով ձի, անմիջապես առանձնացվում ե
և ուղարկվում անտօննաբուժական հիվան-
դանոց՝ նրա բոլոր ախտուային իրերի և ձիա-
սարքի ցուցակի հետ միասին։ Հիվանդանոցը
ձին ցուցակի համաձայն և ձիասարքը ըն-
դունելու մասին տալիս ե համապատասխան
փաստաթուղթ։

374. Հիվանդ ձիու կեցած տեղը պետք ե
ախտահանել, իսկ հարեւան ձիերի վրա հո-
տուկ հոկողություն նշանակել։

375. Ձիերին անասնաբուժական հիվան-
դանոց ուղարկելիս, վորտեղ չկան ձիերի
համար հաստիքային մաքրողներ, ձիերի
հետ ուղարկվում են միլիցիոներներ— 3 հի-
վանդ ձիուն մեկ հոգի։

Հիվանդ ձիերին խնամելու համար անտօ-
նաբուժական հիվանդանոց պործուղված մի

միլիցիոներներն անցնում են հիվանդանոցի
դժկի կարգադրության տակ։

376. Առողջացած ձիուն դուրս են գրամք
հիվանդանոցից և ուղարկում զորամաս հա-
մապատասխան գլուխյամբ վերադպրնելով
կ' ձիասարքը, վոր ցուցակով հանձնված եր
հիվանդ ձիուն հիվանդանոց ընդունելիս։



Յ Ա Ն Կ

ՀԱՏՎԱԾ I

1. Բնդիանուր եկմաններ	8
2. Մառայուր-յան մտնելու կարգը	9
3. Եշանակելու, պաշտոնի իշեցնելու և պաշտոնից ժամանակավորապես հեռացնելու կարգը	11
4. Աշխատաւուր արամանները	15
5. Տեղափոխուր-յուններ	18
6. Գործուդումներ	19
7. Արակուրդներ	23
8. Պաշտոնից պատվիրակ և ծառայու- թյունից հեռանալը	27
9. Ատեհատացիա (վկայուր-յուն) տալը	30
10. Պետքի կազմի ոժանդակների (ու- գերվների) մասին	32

ՀԱՏՎԱԾ II

1. ԲԴ Միլիցիայի աշխատակիցների եկմանական իրավունքներն ու պար- տականուր-յունները և ծառայու- թյան պատախանատվուր-յունը	33
---	----

3. Ներքին կարգը ԲԴ Միլիցիայի եկմ- արկաւր-յուններում և մասերում	43
ա) Ներքին կարգը ԲԴ Միլիցիայի հիմնարկություններում և մա- սերում	42
բ) Ներքին կարգը զորանոցներում տեղավորութած ԲԴ Միլիցիայի զորամասերում	43
2. Առաջուր-յունը պահպանելու մի- ջոցները	53
4. Որտկան վերակարգ	60
ա) Ընդհանուր ցուցումներ	60
բ) Պատասխանատու որատահի ընդհանուր պարտականու- թյունները	61
դ) Միլիցիայի բաժանմունքի, ուս- ունի և քաղաքի պատասխանա- տու որատահի պարտականու- թյունները	63
է) Շարային զորամասի պատաս- խանատականատու որատահի պար- տականությունները	74
կ) Որատահ մասի պարտականու- թյունները	75
լ) Սիոոփի որավորակի պարտա- կանությունները	77
ե. ԲԴ Միլիցիայի աշխատակիցների,	

Վորագես կարգապահական պատժի	
միջոց, կալանքը կրելու կարգը	79
6. Զենքի պահելը	80
7. Միւլցիայի ձիական կազմի տեղա-	
վորումը և ձիերի խնամքը	80
ա) Զիերի տեղավորումը, աթոռ-	
ների կառուցումն ու պահելը	83
բ) Աթոռի մաքրումը	89
դ) Զիասարքը պահելու կարգը	91
դ) Զիուն խնամելու ընդհանուր	
կանոնները	93
ե) Զիերին զուրս հանելը զննու-	
թյան համար	100
զ) Անառնաբուժական-ուանիտարա-	
կան զննություն	103

ՀՀ Ազգային գրադարան



NL0938985

ԳԵՂԱ 35 ԿՈՊ

1

3966